

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Ո ս կ ա ն յ ա ն Ա ն դ ր ա ն ի կ Ա թ թ ո լ ր ի**

**«Ա կ տ ի վ ն ե թ ի ար ժ ե թ ղ թ ա վ ո թ մ ա ն հ ա մ ա կ ար գ ի  
ն ե թ դ թ մ ա ն և գ ար գ ա ց մ ա ն ո լ ղ ի ն ե թ ղ Հ Հ - ո լ մ »**

**Ա տ ե ն ա խ ո ս ո լ թ յ ո լ ն**

**Ը .00.03-«Ֆ ի ն ա ն ս ն ե թ , հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն հ ա շ վ ա ռ ո լ մ »  
մ ա ս ն ա գ ի տ ո լ թ յ ա մ ք տ ն տ ե ս ա գ ի տ ո լ թ յ ա ն թ ե կ ն ա ծ ո լ ի  
գ ի տ ա կ ա ն ա ս տ ի ճ ա ն ի հ ա մ ար**

**Գ ի տ ա կ ա ն ղ ե կ ա վ ար `**  
**տ ն տ ե ս ա գ ի տ ո լ թ յ ա ն դ ո կ տ ո թ , պ թ ո Ֆ ե ս ո թ**

**Ս ա լ ն ա գ ար յ ա ն Ա շ ո տ Բ ո թ ի ս ի**

**Ե Ր Ե Վ Ա Ն 2018**

## Բ ո Վ ա ն դ ա կ ո լ թ յ ո լ ն

Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն .....	3
Գ Լ Ո Ւ Խ 1 Ա Կ Տ Ի Վ Ն Ե Ր Ի Ա Ր Ժ Ե Թ Ղ Թ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Մ Ը Ե Վ Դ Ր Ս Ե Վ Ո Ր Մ Ա Ն Ա Ր Դ Ի Ա Ռ Ա Ն Զ Ն Ա Յ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը .....	12
1.1 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն գ ար գ ա գ մ ա ն գ ո Ր ծ ը ն թ ա գ ի փ ո լ լ ա յ ի ն ն կ ար ա գ ի ը .....	12
1.2 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն \$ ի ն ա ն ս ա կ ա ն և տ ն տ ե ս ա կ ա ն ար դ յ ո լ ն ք ն ե թ ը .....	25
1.3 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն գ ո Ր ծ ը ն թ ա գ ի բ ար ե լ ա վ մ ա ն ո լ ո Ր տ ն ե թ ը Յ Յ - ո լ մ .....	37
Գ Լ Ո Ւ Խ 2 Ա Կ Տ Ի Վ Ն Ե Ր Ի Ա Ր Ժ Ե Թ Ղ Թ Ա Վ Ո Ր Մ Ա Ն \$ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Յ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ի Յ Ի Մ Ն Ա Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը Յ Յ - ո լ մ .....	71
2.1 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն մ ի ջ ա գ գ ա յ ի ն փ ո Ր ձ ի ն ե թ դ Ր մ ա ն մ ո տ ե գ ո լ մ ն ե թ ը Յ Յ - ո լ մ .....	71
2.2 Յ ի փ ո թ ե ք ա յ ի ն ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն \$ ի ն ա ն ս ա կ ա ն ռ ի ս կ ե թ ի գ ն ա հ ա տ մ ա ն ա ռ ա ն ձ ն ա հ ա տ կ ո լ թ յ ո լ ն ն ե թ ը .....	80
2.3 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն հ ա մ ա կ ար գ ի \$ ի ն ա ն ս ա կ ա ն կ ա յ ո լ ն ո լ թ յ ա ն գ ն ա հ ա տ մ ա ն հ ի մ ն ա խ ն դ ի Ր ն ե թ ը .....	97
Գ Լ Ո Ւ Խ 3 Ա Կ Տ Ի Վ Ն Ե Ր Ի Ա Ր Ժ Ե Թ Ղ Թ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Յ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ի Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն \$ Ի Ն Ա Ն Ս Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Խ Թ Ա Ն Ն Ե Ր Ը Յ Յ - ո լ մ .....	113
3.1 Ա կ տ հ Վ ն ե թ ի ար ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն տ ն տ ե ս ա կ ա ն գ ն ա հ ա տ մ ա ն մ ո տ ե գ ո լ մ ն ե թ ի վ ե թ լ ո լ ծ ո լ թ յ ո լ ն ը .....	113
3.2 Ա Ր ժ ե թ դ թ ա վ ո Ր մ ա ն ար դ յ ո լ ն ա վ ե տ ո լ թ յ ա ն տ ե դ ե կ ա տ վ ա կ ա ն հ ո ս ք ե թ ի ձ ա վ ո Ր մ ա ն հ ի մ ն ա խ ն դ ի Ր ն ե թ ը .....	127
3.3 Ա կ տ հ Վ ն ե թ ո վ ե թ ա շ խ ա վ ո Ր վ ա ծ պ ար տ ա տ ո մ ս ե թ ի շ ո լ կ ա յ ի գ ար գ ա գ մ ա ն ո լ դ ի ն ե թ ը Յ Յ - ո լ մ .....	139
Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն .....	152
Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ճ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ց Ա Ն Կ .....	159
Յ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ Ն Ե Ր .....	166

## Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Թե մայի արդիականությունը:** Ակտիվների արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են տեսաբանների հետազոտության ու շարունակության կենտրոնում: Եվ պատճառը միայն ֆինանսական նորաստեղծ այդ գործընթացի կիրառումը չէ, այլ և ակտիվների արժեթղթավորման նշանակալից ազդեցությունը տնտեսության զարգացման վրա: Ակտիվների արժեթղթավորման զարգացումը հիմնականում ներկայացվում է փոփոխություն, որպես սկզբնական համարելով հիփոթեքային վարկերի արժեթղթավորումը, այնուհետև հաջորդական փոփոխություն համարելով ֆինանսական ակտիվների արժեթղթավորումը և դրամական հոսքերի արժեթղթավորումը:

Միևնույն ժամանակ, ակտիվների արժեթղթավորման տնտեսական շարժառիթները ձևավորվում են ինչպես տնտեսավարման մասնավոր, այնպես էլ հանրային հատվածում, երբ անհրաժեշտություն է ստեղծվում «երկար փողերի» կազմավորման և օգտագործման համար: Եթե հանրային ոլորտը ակտիվների արժեթղթավորմամբ լուծում է մակրոտնտեսական խնդիրներ՝ բնակչության խնայողությունները ուղղորդելով ներդրումային ոլորտ, ապա բիզնեսի ոլորտը ակտիվների արժեթղթավորման ճանապարհով բարձրացնում է գործարար ակտիվության աստիճանը:

Սակայն, դեռևս ինչպես տնտեսության մեջ, այնպես էլ ՀՀ ֆինանսատնտեսական գործնական շրջանակում, որպես կանոն, ակտիվների արժեթղթավորման գործընթացը հիմնականում ընկալվում է վերաֆինանսավորման շրջափոփումի լիարժեք իրացման տեսանկյունից: Այսինքն, ՀՀ-ում իրականացվող ակտիվ-

ն ե ր ի ար ժ ե թ ղ թ ա վ ո ր ու մ ը դ ե ռ և ս տ ն տ Ե ս ա կ ան առ ու մ ո վ դ ի տ ար կ վ ու մ Է «Ֆ ի ն ան ս ա կ ան հ ո ս ք Ե ր ը պ ար տ ա տ ո մ ս Ե ր ի փ ո խ ա կ Ե ր պ ու մ - ար ժ Ե թ ղ թ Ե ր ի տ Ե ղ ա ք ա շ խ ու մ - վ Ե ր ա վ ար կ ա վ ո ր ու մ - պ ար տ ա տ ո մ ս Ե ր ի մ ար ու մ» շ ր ջ ա փ ու Լ ի ան խ ա փ ան ու թ յ ան հ ա մ ա տ Ե ք ս տ ու մ, ա յ Լ ո չ թ Ե ա յ դ շ ր ջ ա փ ու Լ ի տ ն տ Ե ս ա կ ան ար դ յ ու Լ ն ա վ Ե տ ու թ յ ան շ ր ջ ան ա կ ու մ: Ա յ ս պ ի ս ո վ, հ ի մ ն ա կ ան ու մ կ ար և ո ր վ ու մ Է ա կ տ ի վ ն Ե ր ի ար ժ Ե թ ղ թ ա վ ո ր մ ան Ֆ ի ն ան ս ա կ ան վ Ե ր ա հ ս կ ո ղ ու թ յ ու Լ ն ն ու մ շ տ ա դ ի տ ար կ ու մ ը, ա յ Լ ո չ թ Ե ա յ դ գ ո ր ծ ը ն թ ա ց ի տ ն տ Ե ս ա կ ան ար դ յ ու Լ ն ա վ Ե տ ու թ յ ան գ ն ա հ ա տ ու մ ը: Ի ս կ ա կ տ ի վ ն Ե ր ի ար ժ Ե թ ղ թ ա վ ո ր ու մ ն ի ր փ ա ս տ ա ց ի Ե կ ա մ տ ա ք Ե ր ու թ յ ու Լ ն ն Է ձ և ա վ ո ր ու մ ի ն չ պ Ե ս ն Ե ր դ ր ո ղ ն Ե ր ի, ա յ ն պ Ե ս Է Լ ն ա խ ա ձ Ե ռ ն ո ղ ն Ե ր ի տ ն տ Ե ս ա կ ան գ ո ր ծ ու Լ ն Ե ու թ յ ու Լ ն ու մ, ո ր ն ան հ ր ա ժ Ե շ տ Է դ ա ռ ն ու մ չ ա փ Ե Լ, գ ն ա հ ա տ Ե Լ և վ Ե ր Լ ու ծ Ե Լ տ ն տ Ե ս ա կ ան գ ո ր ծ ու Լ ն Ե ու թ յ ան ա կ տ ի վ ու թ յ ան տ Ե ս ան կ յ ու Լ ն ի ց: Ը ն դ ո ր ու մ, ա յ ս հ ի մ ն ա հ ար ց ի ու ս ու մ ն ա ս ի ր ու թ յ ու Լ ն ը դ ե ռ և ս ան հ ր ա ժ Ե շ տ խ ո ր ու թ յ ա մ ք ու ս ու մ ն ա ս ի ր վ ա ծ չ Է 33-ու մ ձ և ա վ ո ր վ ո ղ Ֆ ի ն ան ս ա տ ն տ Ե ս ա կ ան հ ար ա ք Ե ր ու թ յ ու Լ ն ն Ե ր ի գ ո ր ծ ն ա կ ան և տ Ե ս ա մ Ե թ ո դ ա ք ան ա կ ան հ ար թ ու թ յ ու Լ ն ն Ե ր ու մ:

Մ յ ու Լ ս կ ո ղ մ ի ց, ա կ տ ի վ ն Ե ր ի ար ժ Ե թ ղ թ ա վ ո ր մ ան գ ո ր ծ ը ն թ ա ց ը ո ր ո շ ա կ ի ո ր Ե ն կ ր ու մ Է Ֆ ի ն ան ս ա կ ան Է ա կ ան ռ ի ս կ Ե ր: Ը ն դ ո ր ու մ, Ֆ ի ն ան ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ը տ Ե ղ ա յ ի ն Լ ի ն Ե Լ ու ց ք ա ց ի, կ ար ո ղ Ե ն վ Ե ր ա ծ վ Ե Լ հ ա մ ա կ ար գ ա յ ի ն ք ն ու յ թ ի և ան գ ա մ պ ա տ ճ ա ռ դ ա ռ ն ա Լ հ ա մ ա շ խ ար հ ա յ ի ն Ֆ ի ն ան ս ա տ ն տ Ե ս ա կ ան ճ գ ն ա ժ ա մ ի, ո ր ի ց ա յ տ ու Լ ն օ ր ի ն ա կ ը հ ան դ ի ս ա ց ա վ Ա Մ Ն հ ի փ ո թ Ե ք ա յ ի ն շ ու կ ան: Ա յ ս առ ու մ ո վ, ան հ ր ա ժ Ե շ տ ու թ յ ու Լ ն Է ծ ա գ ու մ գ ն ա հ ա տ Ե Լ ա յ դ գ ո ր ծ ը ն թ ա ց ի ն ու ղ Ե կ ց ո ղ Ֆ ի ն ան ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ը ար ժ Ե թ ղ թ ա վ ո ր մ ան հ ա մ ա խ մ ք վ ա ծ ռ ի ս կ ի ց ու ց ան ի շ ո վ, ո ր ն ի ր խ ո ր ք ա յ ի ն մ Ե կ ն ա ք ան ու թ յ ու Լ ն ն Ե ր ը դ ե ռ և ս չ ի

ստանուում ինչպես տեսուչության մեջ, այնպես էլ գործնականում:

ՀՀ ֆինանսատնտեսական իրականությունում դեռևս իր համապարփակ լուծումը չի գտել նաև ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքների տեղեկատվական հոսքերի համակարգման խնդիրը: Ակտիվների արժեթղթավորման գործընթացում ընդգրկված բոլոր կազմակերպչական միավորները տեղեկատվության փոխանցման առումով գործում են միմյանց հից անկախ: Եվ քանի որ ակտիվների արժեթղթավորումն իր բնույթով չի սահմանափակվում մեկ կազմակերպության շրջանակում, և մյուս կողմից, տնտեսական եկամտաբերության հետագիծ է թողնում ինչպես ներդրողների, այնպես էլ բանկերի, վարկառուների շրջանում, ուստի ոչ միայն հնարավոր է դառնում, այլև անհրաժեշտություն է առաջանում համակարգելու այդ տեղեկատվությունը կենտրոնացված հաշվապահական հաշվառման միջոցով, որի գծով տեսաբանների կողմից դեռևս չեն առաջարկվում մեթոդաբանական լուծումներ:

ՀՀ-ում արժեթղթավորված ակտիվների շուկայի զարգացման եական ռեգերվներ է պարունակում հիփոթեքային վարկավորումը: Ավելին, ՀՀ հիփոթեքային շուկայում վերջին տարիների զարգացումների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ վարկերի տեղաբաշխման գործընթացում նույնիսկ կարճաժամկետ կտրվածքով աճ է նկատվում: Այս առումով, ներկայումս կարևորվում է ակտիվների արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման հայեցակարգի առաջադրումը, որում ակտիվներով ապահովված պարտատոմսերի շուկայի զարգացման խթանիչ ուղիներ կներկայացվեն նախաձեռնողների, պարտատոմսեր գնորդների, վերավարկավորող

կազմակերպությունների տնտեսական շահերի ներդաշնակեցման ոլորտում: Յետևաբար, արդիական է համարվում ակտիվներով ապահովված պարտատոմսերի շուկան դիտարկել առավել լայն իմաստով և նրամասնակիցների միջև փոխկապակցված մոտիվացիոն ծակներ ստեղծելով՝ «երկար փողերի» արդյունավետ կառավարման և տնտեսական շահերի հետապնդելու համար:

Այդ առումով, կարևորվում է ՀՀ-ում գործող ֆինանսական շուկայում համեմատական վերլուծության իրականացումը արժեթղթավորման տնտեսական արդյունավետության գծով ոչ միայն այդ գործընթացի յուրաքանչյուր փուլում, այլև ֆինանսական հոսքերի արժեթղթավորման ամբողջական շղթայում, գնահատելով «երկար փողերի» ձևավորման նպատակահարմարությունն և եկամտաբերությունը:

Ակտիվների արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման հիմնախնդիրների քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես արտասահմանցի տեսաբանների, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատությունում: Սակայն, ակտիվների արժեթղթավորման ինստիտուտների համակցման, հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման ֆինանսական ռիսկերի գնահատման, արժեթղթավորման արդյունավետության գնահատման տեղեկատվական ապահովվածության հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել նրանց հետազոտությունում, որն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունը, կատարված հետազոտության նպատակադրումները, ինչպես նաև թեմայի արդիականությունը:

**Յե տազ ո տո ւ թ յ ան ն պատակ ք և խնդիր ն եր ք :**

Յե տազ ո տո ւ թ յ ան ն պատակ ն է՝ հիմնավորել և ներկայացնել ՀՀ-ում ակտիվների արժեթղթավորման համակարգի զարգացման ուղիները, որոնք նպաստում են հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման \$ինանսական ռիսկերի համապարփակ գնահատմանը, արժեթղթավորման գործընթացի \$ինանսական կայունության ամրապնդմանը, ինչպես նաև ակտիվներով ապահովված պարտատոմսերի թողարկման տնտեսական արդյունավետության գնահատմանը :

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- ուսումնասիրել ՀՀ-ում ակտիվների արժեթղթավորման ինստիտուտների համակցման ներկայիս համակարգը, բացահայտել արժեթղթավորման առկա գործընթացների \$ինանսական կայունության ուղիները,
- բացահայտել ՀՀ-ում արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղղությունները,
- հաշվի առնելով ակտիվների արժեթղթավորման գործընթացի ամբողջական շղթայում ձևավորվող \$ինանսական ռիսկերը՝ ներկայացնել հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման \$ինանսական ռիսկերի գնահատման մոտեցումներ և ակտիվների արժեթղթավորմանը հատուկ ռիսկերի չափման առանձնահատուկ ցուցանիշներ,
- մշակել տեղեկատվական հոսքերի համապարփակ արձանագրման և համակարգման

նպատակային մեխանիզմ, ընդգրկելով  
ակտիվներին արժեթղթավորման ողջ շղթան և  
նպաստելով այդ գործընթացի տնտեսական  
արդյունավետության գնահատման աստի-  
ճանի բարձրացմանը,

- առաջարկել ՀՀ-ում ակտիվներին արժեթղթա-  
վորման համակարգի ներդրման և զարգացման  
հայեցակարգային դրույթներ,  
ներկայացնելով ակտիվներով ապահովված  
պարտատոմսերի շուկայի զարգացման  
խթանիչ ուղիները:

**Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և  
առարկան:** Հետազոտության ուսումնասիրության  
օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում  
գործող արժեթղթերի շուկան է՝ իրեն հատուկ  
ֆինանսական գործիքներով,  
ենթակառուցվածքներով և գործառնություն  
նլորտով:

Հետազոտության առարկան ակտիվներին  
արժեթղթավորման համակարգում և  
արժեթղթավորման ֆինանսատնտեսական  
կառավարման հայեցակարգային շրջանակներում  
առկա հիմնախնդիրներն են:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և  
տեղեկատվական հիմքերը:** Հետազոտության համար  
տնտեսական հիմք են հանդիսացել ակտիվներին  
արժեթղթավորման գործընթացի, հատկապես՝  
հիփոթեքային վարկերի արժեթղթավորման  
վերաբերյալ հայրենական և արտասահմանյան  
հետազոտողների աշխատությունները, գիտական  
հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը,  
մակրոտնտեսական վերլուծությունները, ինչպես  
և այդ ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրական և



հրավական    այլ    փաստաթղթերը :  
 Ատենախոսությունը ունումնորպես տեղեկատվական հիմք  
 օգտագործվել են ակտիվներ արժեթղթավորող և  
 պարտատոմսեր թողարկող կազմակերպությունների  
 գործունեության \$ինանասական արդյունքներին  
 վերաբերող հաշվետվական տվյալները, ՀՀ վիճակագ-  
 րական և ուսումնասիրման բնագավառին առնչվող  
 այլ նյութեր :

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական  
 արստրակցիայի, \$ինանասատեսական, վիճակագ-  
 րական, գործունային և փորձագիտական  
 վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ակտիվների  
 արժեթղթավորման գծով փորձագիտական ուսումնա-  
 սիրությունների եղանակներ :

**Հետազոտություն    գիտական    նորոյթը :**  
 Հետազոտության գիտական նորոյթը ՀՀ-ում  
 ակտիվների արժեթղթավորման համակարգի  
 զարգացման հայեցակարգի մշակումն է :  
 Մասնավորապես .

- Ակտիվների արժեթղթավորման  
 ինստիտուտների համակցման ներկայիս  
 խնդիրներին, ինչպես նաև արժեթղթավորման  
 առկագործընթացների \$ինանասական կայունու-  
 թյան ուսումնասիրությունների հիման վրա  
 բացահայտվել են ՀՀ-ում արժեթղթավորման  
 համակարգի զարգացման խոչընդոտները և  
 հիմնավորվել դրանց հաղթահարման  
 ուղղությունները :
- Մշակվել է հիփոթեքային ակտիվների  
 արժեթղթավորման \$ինանասական ռիսկերի գնա-  
 հատման համակարգ՝ հիմնված ակտիվների  
 արժեթղթավորման համընդհանուր շղթայի  
 շրջանակում համախմբված ռիսկի ցուցիչի  
 օգտագործման վրա :

- Մշակվել է ակտիվների արժեթղթավորման ամբողջ շրջափուլի տեղեկատվական հոսքերի համակարգման մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս նոր հաշիվների և հաշվային թղթակցությունների օգնությամբ գրանցել արժեթղթավորման տնտեսական արդյունքները, և մշտադիտարկման ենթարկել պարտատոմսերի տեղաբաշխման և մարման ամբողջ գործընթացը:
- Հիմնավորվել են ակտիվների արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման հայեցակարգային դրույթները և ներկայացվել ակտիվներով ապահովված պարտատոմսերի շուկայի զարգացման և մասնակիցների տնտեսական շահերի խթանման ուղիներ:

***Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:***

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ-ում ակտիվների արժեթղթավորման համակարգի ներդրման և զարգացման գծով տնտեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ակտիվների արժեթղթավորման գործընթացի բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ արժեթղթերի շուկայում՝ նպաստելով ակտիվներով երաշխավորված պարտատոմսերի թողարկման ռիսկերի կառավարման ոլորտում որոշումներ կայացման արդյունավետությանը, արժեթղթավորման տնտեսական արդյունավետու-

թյան գործնական գնահատմանը, հաշվետվական համակարգի մեթոդաբանությունը թյան բարելավմանը:

**Յետազոտություն և փորձարկումը և հրատարակումները:** Յետազոտություն հիմնադրությունները և գիտական արդյունքները քննարկվել են Յայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնում:

Ատենախոսությունները քննարկված հարցերն ու հիմնադրություններն իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 6 հրատարակումներում:

**Ատենախոսություն և կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականությունից և հավելվածներից: Այն ընդգրկում է 28 գծապատկեր և 25 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 135 էջի վրա, որտեղ գրականությունից քանակը գրադեցնում է 7 էջ, իսկ հավելվածները՝ 6 էջ:

**Գ Լ ՈՒ Խ 1 Ա Կ Տ Ի Վ Ն Ե Ր Ի Ա Ր Ժ Ե Թ Ղ Թ Ա Վ ՈՐ Մ Ա Ն  
2 Ա Ր Գ Ա Ց ՈՒ Մ Ը Ե Վ Դ Ր Ս Ե Վ ՈՐ Մ Ա Ն Ա Ր Դ Ի  
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1.1 Ա կ տ հ վ ն ե թ ի ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն զ ար գ ա ց մ ա ն  
գ ո Ր ծ ը ն թ ա ց ի փ ո ւ ւ ա յ ի ն ն կ ար ա գ ի Ր ը**

Արժեթղթերի շուկայի ակտիվությունը կախված է երկրի տնտեսության ծավալներից, թողարկող ընկերությունների գործունեության արդյունավետությունից, բնակչության կենսամակարդակից և խնայողությունների ձևավորելու նրանց կարողությունից, ինչպես նաև ներդրման օբյեկտ հանդիսացող \$ինանսական գործիքների առկայությունից: Արժեթղթերի շուկայի միջոցով, մի կողմից, տեղի է ունենում դրամական միջոցների հոսք դեպի տնտեսության այն ոլորտները, որտեղ առկա է դրանց պակասը, մյուս կողմից՝ իրականացվում է կապիտալի ուղղորդումը դեպի այն ոլորտները, որոնք վերելք են ապրում և համապատասխանաբար կարիք ունեն մեծածավալ ներդրումների<sup>1</sup>:

Արժեթղթերի շուկայի ծագումը հաճախ կապում են 15-16-րդ դարերի հետ, երբ ստեղծվեց \$ինանսական շուկան: Այդ ժամանակաշրջանում, երկրները՝ պետական բյուջեի պակասուրդը ծածկելու համար անհրաժեշտ լրացուցիչ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով սկսեցին թողարկել և տեղաբաշխել պետական արժեթղթերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս: Մասնավորապես, 1531թ.-ին Բելգիայի Անտվերպեն քաղաքում ստեղծվեց բորսա, որը մեծ դեր խաղաց միջազգային առևտրում: Իսկ \$րանսիայում \$ոնդային շուկայի ձևավորումը սկիզբ առավ 18-րդ դարում: Մասնավորապես 1724թ.-ին

<sup>1</sup> Стародубцева Е.В., Рынок ценных бумаг, М.: ИНФРА-М, 2006, с 12

կառավարությունն ախաճեռնությունը Փարիզում ստեղծվեց \$ոնդային բորսա: Այս բորսայում գործարքներ թույլատրվում էր կատարել միայն պաշտոնական մակլերներին: Ի տարբերություն \$րանսիայի, առաջին ամերիկյան \$ոնդային բորսան ստեղծվել է 1791թ-ին \$իլադելֆիայում, իսկ 1792թ-ին՝ 24 նյու-յորքյան բրոքերների միջև կնքված համաձայնագրի արդյունքում ստեղծվեց Նյու-Յորքի բորսան: Յետագայում, բանկային ոլորտի զարգացումը և երկաթուղային գծերի կառուցումը նպաստեցին \$ոնդային բորսայի զարգացմանը, իսկ ահա 20-րդ դարում, նոր տեխնոլոգիաների շնորհիվ բորսայական առևտուրը էլավելի զարգացավ<sup>2</sup>:

Արժեթղթերի շուկայի ձևավորման վաղ փուլում, երկրները թողարկում էին պետական արժեթղթերը, մասնավորապես՝ պետական պարտատոմսերը, բյուջեի պակասուրդը \$ինանսավորելու նպատակով<sup>3</sup>: Նշենք, որ արժեթղթերի շուկայի զարգացման կարևորագույն խթաններից հանդիսացավ նաև արժեթղթերի նկատմամբ պահանջարկի ձևավորումը, քանի որ մարդկանց մոտ ցանկությունն առաջացավ իրենց եկամուտների ավելցուկային մասը ներդնել արժեթղթերում՝ ավելի բարձր եկամտաբերությունն ապահովելու համար:

Աստիճանաբար, շուկայական հարաբերություններն և տեխնոլոգիական զարգացմանը գուզընթաց, պետական արժեթղթերի հետ մեկտեղ լայն տարածում գտան նաև ոչ պետական, այսինքն՝ կորպորատիվ արժեթղթերը: Այսօր, հիմնական \$ոնդային բորսաներում գնվում և վաճառվում են միլիոնավոր արժեթղթեր, որոնք թողարկում են կազմակերպությունները լրացուցիչ կապիտալ ներգրավելու նպատակով: Չարգացած

<sup>2</sup> The World's First Stock Exchange, Lodewijk Petram, Columbia University Press, 1st edition 2014, pg 73  
<sup>3</sup> A History of the Global Stock Market: From Ancient Rome to Silicon Valley, B. Mark Smith, University of Chicago Press; 1 edition 2004, pg 37

տնտեսությունն ունեցող երկրներում ֆոնդային բորսաները դարձել են գործարար աշխարհի անբաժանելի մասը, ինչը վստահաբար չենք կարող ասել Յայաստանի Յանրապետություն մասին:

Արժեթղթերի շուկայի զարգացմանը էականորեն նպաստում է ակտիվների արժեթղթավորումը: Մասնագիտական գրականությունում արժեթղթավորման գործընթացների մեկնարկը հիմնականում փոխկապակցվում է հիփոթեքային վարկերի իրացվելիություն և դրան հաջորդող «երկար փողերի» ձևավորման հետ, որն իր բուն զարգացումը ստացավ նախորդ դարաշրջանի վերջին տասնամյակներին<sup>4</sup>: Սակայն, արժեթղթավորման դրսևորումները դեռևս չեն հայտնվել մի քանի դարառաջ, այս առումով, մեր կողմից ակտիվների արժեթղթավորման էվոլյուցիան առաջարկվում է ներկայացնել երեք փուլով, որոնք են արժեթղթավորման գործընթացի սկզբնավորումը (մեր թվարկությունն ից առաջ մինչև միջնադար), գործընթացի զարգացումը և տեսական հիմքերի ձևավորումը (17-20-րդ դարեր), գործընթացի ինովացիոն ֆինանսական գործիքի ժամանակակից դրսևորումը (21-րդ դար):

*Ակտիվների արժեթղթավորման գործընթացի զարգացման առաջին փուլը .*

Արժեթղթավորմանը հատուկ «երկար փողերի» ձևավորման դրսևորումները արձանագրվել են դեռևս Յին Յունաստանում, երբ հարուստ վաճառականների կողմից պետությունն ից գնվում էին գյուղացիական տնտեսությունների հարկային պարտավորությունների հավաքագրման իրավունքները՝ տարվա սկզբում ձեռքբերման գումարները միանավազ փոխանցելով պետական

<sup>4</sup> Белозеров С.А., Лупырь А. А. Современный механизм секьюритизации активов: экономическое содержание исходных категорий // Финансы и кредит. 2010. № 29. С. 7-8

գանձարան, իսկ այնուհետև վաճառականներին իրավունք էր վերապահվում տարվա ընթացքում լրավճարներով հարկեր հավաքագրել գյուղացիներին<sup>5</sup>: Դրանով իսկ, իրականացվում էր հարկային մուտքագրումների գնում պետությանը, այսինքն սպասվելիք դրամական հոսքերի ձեռք բերում և կառավարում, որի իրագործման մեխանիզմը ընկած է ժամանակակից արժեթղթավորման գործընթացների հիմքում:

Արդեն իսկ XI դարում պետությանը հարկային պարտավորությունների հավաքագրման ձեռքբերման իրավունքը Բյուզանդական կայսրությանում ընդունվեց որպես սովորական ֆինանսական գործիք և համարվեց որպես «պետական պարտավորությունների փոխառման խելամիտ միջոց, որը բխում էր այդ ժամանակների հանրային ֆինանսների տկարությունից»<sup>6</sup>: Փաստորեն, մի կողմից հարկերի հավաքագրման իրավունքի վաճառքով պետությանը ապահովվում էր ֆինանսական կայունների հոսքերը գանձարան, մյուս կողմից, խրախուսում էր հարկավաճեցների գործունեությունը և դրանով իսկ՝ բարելավում ֆիսկալ քաղաքականության թույլ կողմերը: Այս պարագայում, նույնպես տեղի էր ունենում «հարկային պարտավորությունների պասիվ մարման» ակտիվացում և հանրային ֆինանսների առողջացում՝ «երկար փողերի» միջոցով:

Հատկանշական է, որ ապագա դրամական հոսքերի սեքյուրիթիզացիան<sup>7</sup> պետական ֆինանսների ոլորտից, հետագայում տեղափոխվեց մասնավոր

<sup>5</sup> Andreades A. M. A History of Greek Public Finance. Vol. 1. Translated by Carroll Brown. Cambridge: Cambridge University Press, 1933. pp. 159-161.

<sup>6</sup> The Economic History of Byzantium: From the Seventh through the Fifteenth Century // Editor-in-Chief Angeliki E. Laiou. Vol. 1. Washington, D.C.: Dumbarton Oaks Research Library and Collection, 2002. pp. 7-8

<sup>7</sup> Սեքյուրիթիզացիան չպետք է հասկանալ որպես ֆինանսական ապահովվածություն: Այն անգլերենից թարգմանաբար նշանակում է արժեթղթավորում (security-արժեթուղթ)

Ֆինանսներին բնագավառ, երբ արդեն XVII դարում հոլանդացի գաղութարարները շաքարի արտարողության կարիքյան պլանտատորներին դրամային փոխառություններ էին տրամադրում, որոնք ապահովված էին տեսանելի ապագայում շաքարի վաճառքից սպասվող դրամական հոսքերով<sup>8</sup>։ Չուգահեռներ անցկացնելով կարող ենք փաստել, որ դեռևս գաղութացման այդ ժամանակներում «երկար փողերի» մեխանիզմներն ունեին նմանություններ ներկայումս իրականացվող դրամային ակտիվների արժեթղթավորման գործընթացների հետ։

*Ակտիվների արժեթղթավորման գործընթացի զարգացման երկրորդ փուլ (17-20-րդ դարեր)*

Արժեթղթավորման գործընթացի զարգացման երկրորդ փուլը առաջին հերթին դրսևորվեց տեսամեթոդաբանական աշխատանքների հրապարակումներով և գործընթացի կենտրոնացված համակարգումով։ Ակտիվների արժեթղթավորման տեսություն զարգացման հիմնադիր պետք է համարել շոտլանդացի տնտեսագետ Չոն Լոին, ով դեռևս 18-րդ դարի սկզբին հրատարակած իր աշխատությունում («Money and Trade Considered with a Proposal for Supplying the Nation with Money» 1705 թ.) Շոտլանդիայի խորհրդարանին առաջարկեց հիմնել հիփոթեքային բանկ և մետաղադրամներին զուգահեռ՝ թողարկել անշարժ գույքի ակտիվներով ապահովված շրջանավոր արժեթղթեր։ Նման առաջարկը հիմնավորվում էր նրանով, որ ի տարբերություն մետաղադրամների, որոնք ընդամենը փոխանակման միջոց էին, ակտիվներով ապահովված արժեթղթեր տնօրինողները հնարավորություն ունեին ստանալ ու նաև հավելյալ տոկոսներ՝ ակտիվների շուկայական գների բարձրացման

<sup>8</sup> Lejot P., Arner D., Schou-Zibell L. Securitization in East Asia // Working Paper Series on Regional Economic Integration №12. Office of Regional Economic Integration. Asian Development Bank. January, 2008. P. 4



արդյունքում<sup>9</sup>: Այնուհետ, լեհ տնտեսագետ Ա. Յեշկովսկին իր աշխատության ներքո մշարունակեց հիմնավորել տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի թողարկման կարգավորման տեսական հիմնադրույթները<sup>10</sup>:

Ի վերջո, ակտիվների արժեթղթավորումը դիտարկվեց որպես արժեթղթերի շուկայի ակտիվացման արդյունավետ ֆինանսական գործընթաց և դարձավ տեսաբան տնտեսագետների ուսումնական սիրույթյան օբյեկտ: Սակայն դեռևս տեսաբանների շրջանում չկա միասնական մոտեցում ակտիվների արժեթղթավորման սահմանման ոլորտում: «Յնարավոր է, որ այժմ միայն Լոնդոնում շրջանառվի շուրջ 279 արժեթղթավորման սահմանում»<sup>11</sup>, - նշում է ին նրանք:

Հիմնականում, մասնագիտական գրականության ոլորտում ակտիվների արժեթղթավորումը կապակցում են ֆինանսական ակտիվներին նոր որակ հաղորդելու և վաճառահանելու հետ, նշելով, որ արժեթղթավորումը ֆինանսական գործիքների համակցումն ու փաթեթավորումն է նոր գործիքակազմում, որը հնարավոր է վաճառել<sup>12</sup>, կամ արժեթղթավորումը կառուցողական գործընթաց է, որը թույլ է տալիս փաթեթավորելու վարկային տոկոսներն ու դեբիտորական պարտքերը, և դրանք վաճառելու որպես ապահովված արժեթղթեր<sup>13</sup>:

Մասնագիտական գրականության ոլորտում նշվում է նաև, որ արժեթղթավորումը ֆինանսական գործարք է, որի դեպքում կատարվում է որակապես միասնական ակտիվների համախմբում, դրա հիման վրա արժեթղթերի թողարկում և տոկոսների վճարում<sup>14</sup>:

<sup>9</sup> Аникин А. В. История \_финансовых \_потрясений: от \_Джона Ло до Сергея Кириенко. М.: Олимп-Бизнес, 2000., стр. 12

<sup>10</sup> Иванов В. В., Канаев А. В., Соколов Б. И., Топровер И. В. Теории кредита. СПб.: Изд. С.-Петербур. ун-та, 2007, стр. 218.

<sup>11</sup> Бер Х. , Секьюритизация активов, стр 34

<sup>12</sup> Bryan A. Gamer, Black's Law Dictionary, West Publishing Company, 1999, page 15

<sup>13</sup> Comptroller's Handbook on assets securitization, November 1997, page 11

<sup>14</sup> Ярошук О., Лазорина Е. Секьюритизация в России // Рынок ценных бумаг. 2005. № 23. стр. 72–73.

Հատկանշական է, որ «ակտիվների արժեթղթավորում» տերմինն առաջին անգամ օգտագործվել է Wall Street ամսագրում 1977 թվականին, երբ հրատարակվեց հիփոթեքային դեպարտամենտի գործարքը Bank America Issue խորագրով<sup>15</sup>: Ներկայումս, ակտիվների արժեթղթավորումը դիտարկվում է նաև որպես վերաֆինանսավորման արդյունավետ գործընթաց, արձանագրելով, որ արժեթղթավորումը ակտիվների վերաֆինանսավորում է, ուղղված եկամուտների առաջացմանը և ցածր իրացվելի ակտիվների փոխակերպմանը՝ իրացվելի ակտիվների:

Դեռևս 1990-ական թվականների սկզբին ԱՄՆ մոլորակային կազմակերպություններն իրականացրեցին առաջիկա հարկային մուտքերի արժեթղթավորում և արդեն 1996 թվականին միայն Նյու Յորքի քաղաքապետարանը նմանատիպ 7 գործառնությունների հաջող ավարտ ունեցավ՝ \$130 մլն դոլար արժեքով<sup>16</sup>: Արժեթղթավորման նման հաջողված գործարքների փորձը սկսեց իր կիրառումը գտնել Արգենտինայում, Մեքսիկայում, Վենեսուելայում: Որպես արժեթղթավորվող ակտիվներ սկսեցին հանդես գալ նավթային և գազային գործարքների վաճառքից ձևավորվող դրամական հոսքերը, ապահովագրական վճարները, ջրօգտագործման վճարները և այլն: Իսկ Իտալիայում ակտիվների արժեթղթավորման հիմք ընդունվեցին սեփականաշնորհման գործընթացի դրամական հոսքերը և միայն 1999-2006 թվականների ընթացքում թողարկվեց 44,5 մլրդ ԱՄՆ դոլարի նամարժեք պարտատոմս<sup>17</sup>:

*Ակտիվների արժեթղթավորման գործընթացի գարգացման երրորդ փուլ (21-րդ դար)*

<sup>15</sup> Казиков А. История секьюритизации, //Рынок ценных бумаг, 2003, #19, стр 18

<sup>16</sup> Andreas A. Jobst, Sovereign Securitization in Emerging Markets, //Journal of Structured Finance, 2006, Vpl. 12, No.3, pp. 2-13

<sup>17</sup> Шварц С. Л. Алхимия секьюритизации активов // Закон. 2008. № 12. стр. 217-226

Ակտիվներն արժեթղթավորման երրորդ փուլում այդ գործընթացը ներկայացվեց արդեն որպես տնտեսություն \$ ինանսավորման նորարարական գործընթաց: Յատկապես, այն հստակորեն ընդգծվեց մոլենիցիպալ ծրագրերում (ճանապարհ ինունթուներ, հանգստի վայրեր և այլն): Federal Highway Administration կազմակերպության պարտավորությունը իր կողմից «ճանապարհային» պարտատոմսերի գծով արդեն 2005 թ.-ին կազմեց 85 մլրդ. ԱմՆ դոլար: Ներկայումս, զարգացած տնտեսությունը ունեցող երկրներում նկատվում է մոլենիցիպալ պարտատոմսերի թողարկման ակտիվացում, քանի որ դրանք առավել երաշխիքներով են հանդես գալիս ներդրողների շրջանում:

Վերջին տասնամյակում ակտիվներն արժեթղթավորման գործընթացում նկատելի դարձավ «լրացուցիչ եկամուտների» հիմքով պարտատոմսերի թողարկումը, որը սկիզբ առավ ԱՄՆ Էներգետիկ համակարգում: Ձևավորվեց մի իրավիճակ, երբ գործող տարիքները ընդամենը ծախսածածկում էին ապահովում էլեկտրաէներգիայի արտադրության որոշ կազմակերպություններում, սակայն դրանք շարունակում էին գործել պարտատոմսերի թողարկման հաշվին, քանի որ էլեկտրաէներգիայի նախատեսվող թանկացումներից տեսանելի ապագայում ունեին լրացուցիչ եկամտային սպասելիքներ<sup>18</sup>:

Յատկապես զարգացող երկրներում ակտիվություն է նկատվում կենսաթոշակային հիմնադրամներին վճարումների հիմքով ակտիվներն արժեթղթավորման գործընթացում, որը նպատակ է հետապնդում \$ ինանսավորելու հանրային նշանակություն շինարարությունը (Չիլի, Յուգոսլավիա): Բանգլադեշի, Յուգոսլավիա քաղաքային

<sup>18</sup> Joseph C.Hu, Asset Securitization – Theory and Practice 2011, John Wiley & Sonas, pg 25

ի շխանակությունները պարտատոմսեր են թողարկում, որպես սկիզբներ ընդունելով ավտոճանապարհային, տրանսպորտային բնապահպանական վճարները: Այսպիսով, սկիզբների արժեթղթավորման ավանդական պարտատոմսերին (հիփոթեքային, լիզինգային, ֆինանսական սկիզբներին) գնագընթաց միջազգային պրակտիկայում ներկայումս զարգացում է ապրում ենթակառուցվածքային պարտատոմսերի թողարկումը:

Աղյուսակ 1.1.1

Արժեթղթավորված սկիզբների որակական կառուցվածքն ըստ տարածաշրջանների 2017թ.<sup>19</sup>

<b>Տարածաշրջանը</b>	<b>Կայուն (%)</b>	<b>Աճող (%)</b>	<b>Նվազող (%)</b>
Հյուսիսային Ամերիկա	79,2	14,1	6,7
Եվրոպա	76,5	17,6	5,9
Ավստրալիա	92,8	4,2	3,3
Լատինական Ամերիկա	64,2	25,3	10,5
Ասիա	66,7	33,3	0


Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն ընդգծվում է, որ սկիզբների արժեթղթավորման գործընթացը՝ պահանջելով տարբեր ինստիտուցիոնալ կառույցների գործառույթների համակցում, պահանջում է նաև զգոնություն, քանի որ արդյունավետ ֆինանսավորում իրականացնելիս խախտելով գործընթացը աջակցող կառույցների գործառույթների փոխկապակցման ներդաշնակությունը, ձևավորվում են ֆինանսատնտեսական համակարգային ռիսկեր, որոնք և պատճառ հանդիսացան համաշխարհային վերջին

<sup>19</sup> S&P Global Rating, Global Securitization Lending, July 24 2018, // [www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT](http://www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT)

Ֆինանսական ճգնաժամի համար <sup>20</sup>:

Սակայն, ճգնաժամից հետո համաշխարհային շուկայում զգալիորեն փոխվեց արժեթղթավորված ակտիվների որակական կառուցվածքը, և գերիշխող դարձան վարկանիշային կայունությամբ ակտիվներով ապահովված արժեթղթերը (տես աղյուսակ 1.1.1):

Ընդ որում, վարկանիշային աճը առավելապես դրսևորվեց ապագա դրամական հոսքերը արժեթղթավորելիս, որը ինստիտուցիոնալ կառույցների բարեփոխված գործառույթների շնորհիվ նույնպես վստահություններ չնչեց ներդրողների շրջանում և շուկայի կողմից համարվեց որպես ֆինանսավորման ինովացիոն գործիք:



Գծապատկեր 1.1.1 Յամաշխարհային ֆինանսական շուկայներում պարտատոմսերի վստահության գնահատականը՝ ըստ արժեթղթավորվող ակտիվների տեսակների 2017թ.<sup>21</sup>

Ակտիվների արժեթղթավորման ակտիվացմանը վերջին տասնամյակում զգալիորեն նպաստեց սինդիկացված վարկերի ձևավորումը: Նման փորձեր արվեցին նաև մեր հանրապետությունում: ՀՀ-ում տեղաբաշխված միջազգային սինդիկացված վարկերի

<sup>20</sup> Թովմասյան Ա.Անշարժ գույքի արժեթղթավորման գործընթացը, այդ գործընթացում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, // «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» 9-10, 2015 էջ 36

<sup>21</sup> S&P Global Rating, Global Securitization Lending, July 24, 2018, // [www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT](http://www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT)

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ներգրավվել են սկսած 2007թ.-ից, և այդ գործընթացին մինչ օրս մասնակցել է թվով 5 առևտրային բանկ («Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկ» ՓԲԸ, «Ջայեկոնոմբանկ» ԲԲԸ, «Արարատբանկ» ԲԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ և «Ամերիաբանկ» ՓԲԸ):

Ներգրավված սինդիկացված վարկերի ընդհանուր պորտֆելը կազմում է 175 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ գումարային առումով ամենախոշոր վարկը ներգրավվել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկ» ՓԲԸ-ի (50 մլն ԱՄՆ դոլար), իսկ ամենափոքրը՝ «Ջայեկոնոմբանկ» ԲԲԸ-ի (3 մլն ԱՄՆ դոլար) կողմից<sup>22</sup>:

Աղյուսակ 1.1.2

ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված սինդիկացված վարկերը<sup>23</sup>

N	1.Վարկառու	2.Սինդիկացված վարկի գումարը (ԱՄՆ դոլար)	3.Սինդիկացված վարկի կազմակերպիչ	4.Սինդիկացված վարկի մասնակիցներ	5.Սինդիկացված վարկի մասնակցների ֆինանսավորման չափը (ԱՄՆ դոլար)	6.Գործարքի կնքման տարի	7.Վարկի օգտագործման նպատակը
1	«Ակբա-Կրեդիտ Ագրիկուլ Բանկ» ՓԲԸ	12,000,000	ՎՉԵԲ	ՎՉԵԲ	6,000,000	2007	ՓՄՁ-ների վարկավորում
				Citigroup	6,000,000		
2	«Ջայեկոնոմբանկ» ԲԲԸ	3,000,000	ՎՉԵԲ	ՎՉԵԲ և այլ վարկատուներ	3,000,000	2007	ՓՄՁ-ների վարկավորում
3	«Ջայեկոնոմբանկ»	15,000,000	ՎՉԵԲ	ՎՉԵԲ	5,000,000	2007	ՓՄՁ-ներ
				Commerzbank	10,000,000		

<sup>22</sup> <http://www.irates.am/hy/IMrlobZKDVSAyqDDBhHTQSEsQp>

<sup>23</sup> Աղյուսակը կազմվել է <http://www.banks.am/am/news/newsfeed/1758>, <http://www.banks.am/am/news/newsfeed/4675>, <https://www.panorama.am/am/news/2008/11/07/vzeb/1289025>, <https://www.azatutyun.am/a/1589759.html>, <http://www.irates.am/hy/IMrlobZKDVSAyqDDBhHTQSEsQp>, [http://finport.am/full\\_news.php?id=15837&lang=1](http://finport.am/full_news.php?id=15837&lang=1), <http://www.ambanks.am/hy/2012/07/17/39201/>, <https://www.ardshinbank.am/news/> և <http://www.lragir.am/index/arm/0/economy/rss/124072> էլեկտրոնային կայքերի տվյալների հիման վրա

	Բ Բ Ը			AG, Bank			վ ար կ ար վ ր ր ր Լ մ
				Bank Austria Creditanstalt AG			

Ա ղ յ ո ւ ւ ա կ 1.1.2-ի 2 ար ո ւ ն ա կ ո ւ թ յ ո ւ ն

N	1.	2.	3.	4.	5.	6.	7.
				Raiffeisen Zentralbank Osterreich AG			
				State Bank of India			
				Land Bank of Taiwan			
				FBN Bank (UK)			
4	«Ա կ ր ար Վ ր Ե դ ի տ Ա գ ր ի կ ո ւ Բ ա ն կ » Փ Բ Ը	50,000,000	Վ 2 Ե Բ	Վ 2 Ե Բ Լ ա յ Լ վ ար կ ար ո ւ ն Ե ր	50,000,000	2008	Փ Մ Ձ - ն Ե ր ի վ ար կ ար ո ր ո ւ Լ մ
5	«Ջ ա յ Ե կ ո ն ո մ ք ա ն կ » Բ Բ Ը	10,000,000	Վ 2 Ե Բ	Վ 2 Ե Բ	4,000,000	2010	Փ Մ Ձ - ն Ե ր ի վ ար կ ար ո ր ո ւ Լ մ
				UniCredit Bank Austria AG			
				FBN Bank (UK) Limited			
				Blue Orchared Finance			
6	«Ա ր ար ար ք ա ն կ » Բ Բ Ը	12,000,000	Վ 2 Ե Բ	Վ 2 Ե Բ	3,000,000	2011	Փ Մ Ձ - ն Ե ր ի վ ար կ ար ո ր ո ւ Լ մ
				Promsvyazbank OJSC			
				VDK Spaarbank Byblos Bank S.A.L			
7	«Ա կ ր ար Վ ր Ե դ ի տ Ա գ ր ի կ ո ւ Բ ա ն կ » Փ Բ Ը	30,000,000	Վ 2 Ե Բ	Վ 2 Ե Բ	15,000,000	2012	Փ Մ Ձ - ն Ե ր ի վ ար կ ար ո ր ո ւ Լ մ
				FMO	15,000,000		
8	«Ա ր դ 2 ի ն ք ա ն կ » Փ Բ Ը	18,000,000	Citigroup (հ ամ ա տ Ե ղ կ ա գ մ ա կ Ե ր պ ի չ - ն Ե ր «2 Ե ն ի թ» բ ա ն կ Բ Բ Ը, «Տ Ե դ Ե ր Ե յ թ Ե դ Ի ն վ Ե ս տ ո ր ս» ամ Ե ր ի կ յ ա ն Ֆ ո ն դ, «Վ Տ Բ բ ա ն կ (Գ Ե ր մ ա ն	Citigroup	18,000,000	2014	Բ ա ն կ ի առ ն տր ա յ ի ն ն պ ա տ ա կ ն Ե ր ի ի ր ա կ ա ն ա գ ո ւ Լ մ
				«Ա տ Լ ա ն տ ի կ Ֆ ո թ Ֆ Ե յ թ ի ն գ» Բ Բ Ը			
				«Պ ր ո մ ս վ յ ա գ - բ ա ն կ » Բ Բ Ը			
				OeEB			

			ի ա)»			
--	--	--	-------	--	--	--

Աղյուսակ 1.1.2-ի շարունակություն

N	1.	2.	3.	4.	5.	6.	7.
9	«Ամերիաբանկ» ՓԲԸ	25,000,000	FMO, OeEB	FMO  OeEB	25,000,000	2015	ՓՄՁ - ների, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ծրագրերի վարկավորում

Չարկ է նշել, որ ՅՅ առևտրային բանկերին տրամադրված սինդիկացված վարկերի 3/4-ի (132 մլն ԱՄՆ դոլար) կազմակերպիչն է Վերականգման և զարգացման եվրոպական բանկը, իսկ մյուս վարկերինը՝ ամերիկյան Citigroup, նիդերլանդական FMO (Նիդերլանդների զարգացման \$ինանսական ընկերություն) և ավստրիական OeEB (Ավստրիական զարգացման բանկ) ընկերությունները: Վարկերի զգալի մասը բանկերին տրամադրվել է ՓՄՁ ոլորտում վարկավորում իրականացնելու նպատակով, իսկ դրանց մարման ժամկետը կազմում է մինչև 4 տարի (տե՛ս աղյուսակ 1.1.2):

Այսպիսով, ակտիվների արժեթղթավորման զարգացման ընթացքի վերլուծության հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

Առաջին. ակտիվների արժեթղթավորման տնտեսական շարժառիթները ձևավորվում են ինչպես տնտեսավարման մասնավոր, այնպես էլ հանրային հատվածում, երբ անհրաժեշտություն է առաջանում «երկար փողերի» ձևավորման և օգտագործման համար: Եթե հանրային ոլորտը ակտիվների



արժեթղթավորմամբ լուծում է մակրոտնտեսական խնդիրներ՝ բնակչության խնայողությունները ուղղորդելով ներդրումային ոլորտ, ապաբիզնեսի ոլորտը ակտիվների արժեթղթավորման ճանապարհով բարձրացնում է գործարար ակտիվության աստիճանը:

Երկրորդ, ակտիվների արժեթղթավորման տնտեսական շարժառիթները առնչվում են վերաֆինանսավորման հետ, երբ տնտեսական գործունեության որևէ ժամանակահատվածում անհրաժեշտություն է դառնում վերաֆինանսավորման ճանապարհով եկամուտները առաջացնելու և դրանք վերաուղղելու տնտեսավարման առավել շահավետ ոլորտ:

Երրորդ. ակտիվների արժեթղթավորման գործընթացի ընդլայնմանը գույքընթաց ֆինանսական շուկաներիս առընթեր սկսում են ձևավորվել աջակցող ինստիտուտներ, որոնք շուկաներում իրենց առկայությամբ ապահովում են ոչ միայն արժեթղթավորման սահուն ընթացքը, այլ և նպաստում են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

**1.2 Ակտիվների արժեթղթավորման ֆինանսական և տնտեսական արդյունքները**

Տնտեսավարման արդի պայմաններում կարևորվում է ինչպես ակտիվների արժեթղթավորման տնտեսական նախադրյալների, այնպես էլ արժեթղթավորման մեխանիզմների վերլուծությունը: Ներկայումս, արժեթղթավորման անհրաժեշտությունն ու նախադրյալները դիտարկվում են մի շարք ուղղություններով: Նախևառաջ, ակտիվների արժեթղթավորումը հնարավորություն է ստեղծում գործարարության ընդլայնմանն ուղղված ֆինանսական ներարկումների

իրականացման համար: Գնելով պարտատոմսեր, ներդրողները դրանով լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ են ձևավորում գործարարության զարգացման համար. ակտիվացնում են կապիտալի շուկան և նրավրա ազդող գործոնները (տես հավելված 1):

Մյուս կողմից, ակտիվների արժեթղթավորումը ապահովում է ֆինանսական միջոցների հավաքագրման կայունությունը երաշխիքներ, քանի որ այն հիմնվում է գրավադրված ակտիվների, կամ կայուն դրամական ապագա ներհոսքերի երաշխավորման վրա: Այսպես, եթե առևտրային բանկում 35 մլն դրամ արժողուլթյամբ բնական արան է գրավադրվել և փոխառուին (բնակարանի գնորդին) տրամադրվել է 20 տարով վարկ, որը տոկոսային եկամտի հետ կազմելու է 50 մլն դրամ, ապա յուրաքանչյուր տարվա կտրվածքով վարկի մարման պարտավորության ընդհանուր գումարը վարկառուի կողմից հավասարաչափ մարումների պարագայում կկազմի 2,5 մլն դրամ (50/20), իսկ հնգամյա կտրվածքով՝ 12,5 մլն դրամ (5x2,5): Այս պարագայում, առևտրային բանկը վարկի տրամադրման առաջին իսկ տարում 5 տարի ժամկետով թողարկում է 35 մլն դրամ ակտիվներով ապահովված պարտատոմսեր՝ տեղաբաշխման 12,5 մլն դրամ և մարման 14 մլն դրամ արժեքով (տես գծապատկեր 1.2.1):


Արժեթղթերի շուկայում ներդրողների կողմից պարտատոմսերի ձեռքբերումը պայմանավորվում է ոչ միայն արժեթղթի եկամտաբերությամբ, այլև անշարժ գույքի գրավադրման ապահովվածությամբ: Իր հերթին, առևտրային բանկը պարտատոմսերի վաճառքից հավաքագրած 12,5 մլն դրամի գումարները վերադառնում է հնգամյա կտրվածքով վարկավորման նործրագրերին՝ այդ ֆինանսական ռեսուրսները տեղաբաշխելով մեկնարկային տարվա սկզբին և առաջին

5-րդ տարվա վերջին ստանալով 15 մլ նդրամի եկամուտ: Արդյունքում, պարտատուների թողարկումից ու մարումից առևտրային բանկը հնգամյա կտրվածքով ձևավորում է 1,5 մլ նդրամի վնասներ (12,5-14,0), սակայն եկամուտների առաջացման, ցածր իրացվելի ակտիվների փոխակերպման և վարկային գործունեության ընդլայնման և 12,5 մլ նդրամի լրացուցիչ տեղաբաշխումների արդյունքում 5-րդ տարվա վերջին ստանում է 2,5 մլ նդրամի օգուտներ (15 - 12,5): Եվ ստացվում է այնպես, որ հիփոթեքային վարկերի արժեթղթավորմամբ իրականացվում է վերաֆինանսավորում, ուղղված եկամուտների առաջացմանը և ցածր իրացվելի ակտիվների փոխակերպմանը, որի արդյունքում 5 տարվա ընթացքում առևտրային բանկի ընդհանուր օգուտը կազմում է 1 մլ նդրամ (2,5 - 1,5):

Ընդ որում, ակտիվների արժեթղթավորման գործընթացը կարող է 5 ամյա կտրվածքով պարբերական բնույթ կրել և կրկնվել հիփոթեքային վարկի մարման 20 տարիների ընթացքում (տես գծապատկեր 1.2.1), մինչև որ ակտիվը կհանվի առևտրային բանկի գրավադրումից և վարկառու նամբողջովին կմարի իր բնակարանի ձեռքբերման վարկավորման ամբողջ պարտավորվածությունը: Հետևաբար, ակտիվների արժեթղթավորման արդյունավետ մենեջմենթի պարագայում բանկը հնարավորություն կունենա ձևավորելու «երկար փողեր», հիփոթեքային վարկի մարման ամբողջ ժամանակահատվածում:

Սակայն, ակտիվների արժեթղթավորումը չի ենթադրում միայն վերաֆինանսավորում, ուղղված եկամուտների առաջացմանը և ցածր իրացվելի ակտիվների փոխակերպմանը, ինչը որ տեղի է ունենում հիփոթեքային վարկավորման պարագայում: Հատկապես ապագա դրամական հոսքերը

արժեթղթավորելիս այս ֆինանսական գործիքը  
 և ուրջ ազդակ է հանդիսանում գործարարության  
 ընդլայնմանն ուղղված ռեսուրսների  
 կենտրոնացման և հաշորդիկ ներդրումային  
 դրամային ներարկումների համար: Ապագա դրամական  
 հոսքերի արժեթղթավորման լավագույն օրինակ  
 կարող է հանդիսանալ բջջային հեռախոսակապի  
 օպերատորի գործունեությունը, երբ կազմա-  
 կերպությունը ձգտում է յուրաքանչյուր տարի  
 ալեհավաքների և հեռարձակիչների լրացուցիչ  
 կայանների ներդրման ճանապարհով ապահովել հեռա-  
 խոսակապի նոր ծածկույթներ:




Գծապատկեր 1.2.1. Հիփոթեքային վարկերի  
 արժեթղթավորման դրամական հոսքերն ու  
 ֆինանսական արդյունքները<sup>24</sup>

Ընդ որում, կազմակերպությունն իր  
 գործունեության յուրաքանչյուր տարում  
 ստանում է 10 մլրդ դրամի շահույթ, որը կարող է 20%-ով  
 աճել, երբ կառուցվեն 14 մլրդ դրամ արժողությամբ  
 ալեհավաքների և հեռարձակիչների լրացուցիչ  
 կայաններ և դրանով իսկ ընդլայնվեն  
 բաժանորդների շրջանակները:

<sup>24</sup> Կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով կոնկրետ  
 հետազոտական ոլորտը:

Յաշվի առնելով կազմակերպության դրամական ապագա կայուն հոսքերը, բջջային կապի օպերատորը իր գործունեության առաջին իսկ տարվա սկզբին 2 տարվա մարման ժամկետով թողարկում է 14 մլրդ դրամի պարտատոմսեր, որոնք ապահովված են բաժանորդներից ստացվող երկու տարվա նախատեսվող դրամական եկամուտներով և դրանից բխող շահույթով (տես գծապատկեր 1.2.2), և հիմնում է ալեհավաքների և հեռարձակիչների լրացուցիչ կայաններ: Արդյունքում, սկսված երրորդ տարվանից, կազմակերպության շահույթը աճում է 20%-ով՝ հեռախոսակապի ծածկույթի ընդլայնման և բաժանորդների թվաքանակի աճի շնորհիվ՝ կազմելով 12 մլրդ դրամ (10x1.2):

Երկրորդ տարվա վերջին, մարվում են 14 մլրդ դրամի պարտատոմսերը և ալեհավաքների և հեռարձակիչների լրացուցիչ կայաններ հիմնելու նպատակով երրորդ տարվա սկզբին նորից երկու տարվա մարման ժամկետով 14 մլրդ դրամի պարտատոմսեր են թողարկվում, որոնք նույնպես ապահովված են երրորդ և չորրորդ տարիներին կազմակերպությունում սպասվող դրամական ներհոսքերով: Սակայն այս դեպքում, արժեթղթի ապահովվածության աստիճանը բարձրանում է, քանի որ նշված տարիներին կազմակերպության շահույթը ավելանում է 1,2 անգամ, արդեն կազմելով տարեկան 12 մլրդ դրամ (10x1.2), որն իր հերթին ոչ միայն ամբողջովին ապահովում է արժեթղթի մարումը, այլ և հանգեցնում է չորրորդ տարվա վերջում լրացուցիչ 4 մլրդ շահույթի կուտակման:



Գ ծ ապատկ եր 1.2.2 Ապագա եկամտային սպասուումների արժեթղթավորման դրամական հոսքերն ու ֆինանսական արդյունքները <sup>25</sup>

Վեցերորորդ տարվա վերջին, դրամական հոսքերով ապահովված 14 մլրդ դրամի պարտատոմսերի արդեն երրորդ թողարկման խմբաքանակը նորից մարվում է, սակայն այս անգամ պարտատոմսերի մարման օգուտը կազմում է 8,4 մլրդ դրամ (տես գծապատկեր 1.2.2):

Ակտիվներով ապահովված պարտատոմսերի վաճառքի այս գործընթացը հնարավոր է կազմակերպել նաև հաջորդ տարիների համար, ակնկալելով առավել մեծ օգուտներ, եթե բջջային կապի օպերատորը հնարավորություն ունենա ծառայությունների շուկայում ձեռք բերելու հեռախոսակապի նոր ծածկույթներ և բազմապատկելու բաժանորդների քանակը: Սակայն, ակտիվների արժեթղթավորման ներկայացված սցենարի պարագայում կազմակերպությունը հնարավորություն է ստեղծում դրամական կայուն հոսքերով ապահովված պարտատոմսերի միանվագ վաճառքից ստանալու խոշոր գումարներ և դրանք ուղղորդելու գործարարության ընդլայնման ներդրումային դաշտ:

Այսպիսով, ակտիվների արժեթղթավորման ֆինանսատնտեսական արդյունքների շրջանակը

<sup>25</sup> Կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով կոնկրետ հետազոտական ոլորտը:

լայն է, որը մեր կարծիքով, ձևավորվում է արժեթղթավորման գործընթացի հիմնական չորս շարժառիթներով.

- գործարարությունը ընդլայնմանն ուղղված ֆինանսական ներարկումների ակտիվացում,

- ֆինանսական ներարկումների կայունություն գոյքային դրամային երաշխիքների ստեղծում,


- ներդրումային միջավայրում եկամուտների կենտրոնացում և նպատակային թիրախավորում,

- պարտավորությունների վերաֆինանսավորում և վարկային տեղաբաշխումների արդյունավետության բարձրացում (տես գծապատկեր 1.2.3):

Որպես կանոն, ակտիվների արժեթղթավորումը դիտարկվում է որպես տնտեսավարման համակարգում «երկար փողերի» ապահովման գործընթաց, որն ուղղորդում է տնտեսական գործունեության ակտիվացմանը<sup>26</sup>: Մեր կարծիքով, այդ բնորոշումը պետք է լրացնել, շեշտելով նաև, որ ակտիվների արժեթղթավորումը թիրախավորվում է հիմնականում «պասիվ» փողերի ակտիվացմանը, երբ ցածր իրացվելի ակտիվները տեղափոխվում են արագ իրացվելի ության դաշտ, դրանով իսկ ակտիվություն և հաղորդելով տարբեր ոլորտների տնտեսական գործունեությանը: Իսկ «պասիվ» փողերի առկայությունը բնորոշ չէ միայն բանկային համակարգին, որի ավանդական տնտեսներից են հիփոթեքային վարկային տեղաբաշխումները:

---

<sup>26</sup> Մամիկոնյան Կ., Չավաքական (սինդիկացված) վարկերի տրամադրման համաշխարհային փորձի օգտագործումը ՀՀ-ում, Բանբեր ՀՊՏՀ, 2(26), 2012 էջ 67(64-76)



Գծապատկեր 12.3. Ակտիվների արժեթղթավորման տնտեսական նախադրյալների շրջանակը<sup>27</sup>

Ֆակտորինգային, Լիզինգային ընկերությունները, անգամ շինարարական և արտադրական կազմակերպությունները նույնպես ձևավորում են երկարաժամկետ դեբիտորական պարտքեր, որոնք ըստ էության, պասիվ փողեր են ընդգրկում և արժեթղթավորման դեպքում կարող են «ակտիվանալ» և լուրջ ազդակ հանդիսանալ ձեռնարկատիրության ընդլայնման ու մրցունակություն բարձացման գործում:

Փաստորեն, պասիվ փողերը, կամ դանդաղ իրացվող ակտիվները արժեթղթավորման միջոցով փոխակերպվում են արագ իրացվող ակտիվների, որոնք մասնագիտական գրականությունում<sup>28</sup> հիմնականում ներկայացվում են երեք ուղղություններով.

- հիփոթեքային վարկերի արժեթղթավորում,
- ֆինանսական ակտիվների արժեթղթավորում,

<sup>27</sup> Կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով գրականություն մեջ տեղ գտած մեկնաբանումները:  
<sup>28</sup> Սալնազարյան Ա., Մամիկոնյան Կ., Բանկային ակտիվների արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և երկար փողերի ձևավորման նախապայման, Ֆինանսներ և Էկոնոմիկա 2(164), 2014, էջ 13(12-15)



- դրամական ապագահոսքերի արժեթղթավորում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ակտիվների արժեթղթավորման գործընթացում առավել մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում հիփոթեքային վարկերի գծով կատարվող բանկային տեղաբաշխումները, սակայն \$ինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո գործարար միջավայրում հիփոթեքային վարկերի արժեթղթավորման տեսակարար կշիռն ահանջի միտում է նկատվում, փոխարենը ակտիվությունն արձանագրելով դրամական ապագահոսքերի արժեթղթավորման ոլորտում<sup>29</sup>:

Ընդհանուր առմամբ, հիփոթեքային վարկերի արժեթղթավորումն է մասնագիտական գրականությունում հիմնականում ներկայացվում որպես «սեյլն թիզացիայի» դասական օրինակ, երբ 15-20 տարով գրավադրված անշարժ գույքի դիմաց դեբիտորական պարտքերը ներկա պահին փոխակերպվելով արժեթղթերի, վաճառահանվում են և տարբեր \$ինանսական սխեմաներով նորից ուղղորդվում բանկային համակարգ, ակտիվացնելով վարկային ինտերվենցիան, ի դեպ, որի ոչ արդյունավետ կառավարումն էլ հենց հանգեցրեց \$ինանսատնտեսական ճգնաժամի և շղթայական էֆեկտ ունեցավ հիփոթեքային վարկերի շուկայում<sup>30</sup>:

Սակայն, որքան էլ որ քննադատության արժանանան «\$ինանսական փուլ չի կների» ձևավորման ռիսկեր պարունակող հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման գործընթացները, միևնույնն է, դրանց արդյունավետ կառավարման դեպքում բանկերը հաղթահարում են միշտ քարևորագույն խնդիրներ: Այսպես, արժեթղթավորման գործընթացը օգնում է առևտրային բանկերին լուծելու իրաց-

<sup>29</sup> US Securitization 2016: Year in Review, Part 1, Securitization Market Trends  
<sup>30</sup> Финансовые пузыри и мировой финансово-экономический кризис, М., Финансы, 2013, стр.26-27

Այսպես, աղյուսակ 2.3.3-ում ներկայացված «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի ձեռք բերված վարկերի ոլորտային կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ վարկային համախմբում (փուլում) գգալի տեսակարար կշիռ են կազմում գյուղատնտեսական վարկերը, որոնք առավել ռիսկային են:

Աղյուսակ 2.3.3

«Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի ձեռք բերված վարկերի կազմը՝ ըստ ոլորտների (հազ.դրամ)<sup>118</sup>

Ոլորտներ	2017 թ. հունիսի 30-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գյուղատնտեսություն	62,754	151,664
Առևտուր	36,598	84,633
Սպառողական	27,858	76,177
Արդյունաբերություն	12,336	28,258
Այլ ոլորտներ	15,040	28,990
	154,586	369,722
Պահուստներ վարկերի գծով	(9,521)	(25,629)
Ընդամենը վարկեր	145,065	344,093

2017 թվականի առաջին կիսամյակում վարկային համախմբում գյուղատնտեսական վարկերը կազմում են շուրջ 43%: Նույն ժամանակահատվածում, առևտրային վարկերը, որոնք նվազ ռիսկային են,

<sup>118</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, Երևան 15.09.2017, էջ 15

իրենց տեսակարար կշռով արժեթղթավորման փուլի կազմում չեն գերազանցել 25%-ը: Հենց գյուղատնտեսական վարկերի գծով դրամական ներհոսքերի թերհավաքագրումներն էլ պատճառ են հանդիսացել վերլուծվող ժամանակահատվածում վարկերից սպասելիքների նկատմամբ պահուստների կրճատմանը, երբ պահուստներով փոխհատուցվել են թերհավաքագրման կորուստները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում ակտիվների արժեթղթավորման գործընթացը իր տնտեսական վերլուծությունն է ստանում առավելապես \$ինանսական կարգապահության ապահովման կտրվածքով: Այսպես, «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամի»-ի կողմից հրապարակվող հաշվետվություններում ներկայացվում են պարտատոմսերի մարման գծով անհրաժեշտ մատչելի \$ինանսական պաշարների ձևավորումը (տես աղյուսակ 2.3.4)և բաշխումը (տես աղյուսակ 2.3.5):

Աղյուսակ 2.3.4

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վճարումներն ապահովող մատչելի \$ինանսական միջոցների ձևավորման արդյունքները 14/09/17 դրությամբ <sup>119</sup>

	Դրամային	Դոլարային
Հիմնադրամի կողմից ստացված վարկի մարումներ	46,684,473.70	134,256.17
Հիմնադրամի կողմից ստացված տոկոսագումարներ	4,413,532.70	13,305.59

<sup>119</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ էական փաստերի և տեղեկությունների բացահայտում, Երևան 20.09.17

Յիմնադրամի կողմից ստացված տոկոսեր, տոկոսաբաժնի	2,833,369.40	9,793.25
Յիմնադրամի կողմից ստացված այլ վճարներ	803,450.00	-
<b>Ընդամենը ներհոսք (14/06/17-14/09/17)</b>	<b>54,734,825.80</b>	<b>157,355.01</b>
<b>Յիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/09/2017թ. հաշվեգրված կանոնադրույթի ամբողջական ծախսեր</b>		
Կառավարման վարձ	150,441.8	517.6
Ակտիվների սպասարկման վարձ	93,366.0	366.49
Ծուկաստեղծողի վճար	15,747.5	82.2
Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճար	94,756.7	240.96

Աղյուսակ 2.3.4-ի շարունակություն

	Դրամային	Դոլարային
Պարտատոմսերի ցուցակման և պահպանման վճար	89,351.0	186.82
Արժեթղթերի պահանջանվճար	3,144.0	13.3
ԱՄՆ ՄՁԳ երաշխավորության վճար	1,038.7	39.93
Բանկային հաշիվների սպասարկման ծախսերի վճար	-	131.92
<b>Ընդամենը կատարված և հաշվեգրված ծախսեր</b>	<b>447,845.7</b>	<b>1,579.20</b>
<b>Մատչելի միջոցներ 14/09/17</b>	<b>54,286,980.1</b>	<b>155,775.81</b>

Այս տեղ կարևորվում են թողարկված պարտատոմսերի վճարումներն ապահովող մատչելի ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրները, ինչպիսիք են Հիմնադրամի կողմից ստացված վարկի մարումները, Հիմնադրամի կողմից վաստակած տոկոսագումարները, տույժեր և տուգանքները: Հատկանշական է, որ պարտատոմսերի գծով կրեդիտորական պարտքերի գումարումները ներկայացնելիս հաշվի են առնվում նաև կանոնադրույթի նախատեսված Հիմնադրամի գործունեության վերադիր ծախսերը (տես աղյուսակ 2.3.4), որոնք կազմում են ՀՀ դրամային հոսքերի շուրջ 0,81 %-ը՝ և ԱՄՆ դոլարային ներհոսքերի՝ 1%-ը: Բնականաբար, հաշվետու ժամանակաշրջանի վերջում (14/09/17 դրույթի) Հիմնադրամը իր կողմից թողարկված պարտատոմսերի կրեդիտորական պարտավորությունների մարման գծով կուտակել է բավարար մատչելի դրամական միջոցներ՝ 54,3 մլն դրամային արժեքով, և 155 755 դոլարային արժեքով (տես աղյուսակ 2.3.4):

Հաշվետվության վերոնշյալ ձևը շաղկապված է Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի առնչվող գործարքներն ապահովող մատչելի ֆինանսական միջոցների բաշխման մեկ այլ հաշվետվության ձևի հետ, երբ ներկայացվում են պարտատոմսերի արժեկտրոնի վճարման միջոցները ՀՀ դրամային և ԱՄՆ դոլարային արժեքների կտրվածքով (տես աղյուսակ 2.3.5): Այս տեղեկատվության շրջանակում ընդգրկվում են նաև մատչելի միջոցները՝ արժեկտրոնների վճարումից: Ակտիվների արժեթղթավորման հիմնադրամները ձգտում են արտաքին օգտագործողներին ներկայացնել կազմակերպության ֆինանսական հնարավորությունները պարտատոմսերի

արժեկտրոնների վճարումից հետո և պարզաբանում մայր գումարների մարման ֆինանսական պաշարները <sup>120</sup>:

Աղյուսակ 2.3.5

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի առևձվող գործարքներն ապահովող մատչելի ֆինանսական միջոցների բաշխումը 14/09/17 դրո՞ւթյամբ <sup>121</sup>

<b>Դրամային</b>		<b>Դոլարային</b>
<b>Մատչելի միջոցներ 14/09/17թ. դրո՞ւթյամբ</b>	<b>54,286,980.10</b>	<b>155,775.81</b>
<b>Արժեկտրոնի վճարում բոլոր պարտատոմսերի համար</b>	<b>937,146.00</b>	<b>2,773.09</b>
Արժեկտրոնի վճարում 1 պարտատոմսի համար	21.00	0.2448
Պարտատոմսերի քանակ	44,626	11,328
<b>Մատչելի միջոցներ արժե- կտրոնների վճարումից հետո</b>	<b>53,349,834.10</b>	<b>153,002.72</b>
Վարկառուների կողմից փաստացի կատարված վարկի մարումներ	46,684,473.70	134,256.17
Պարտատոմսերի պարտքային մնացորդը 14/09/17 դրո՞ւթյամբ	24,990,560.00	130,498.56
<b>Պարտատոմսի վճարման ենթակամայր գումար</b>	<b>24,990,560.00</b>	<b>130,498.56</b>
<b>Մայր գումարի վճարում 1 պարտատոմսի համար</b>	<b>560.00</b>	<b>11.52</b>

<sup>120</sup> Ефимова Ю. Как превратить долги в оборотные средства // Финансы-2004- № 5

<sup>121</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ էական փաստերի և տեղեկությունների բացահայտում, Երևան 20.09.17

Դրան հաջորդում են նաև պարտատոմսերի մայր գումարների գծով վճարումների ֆինանսական միջոցների մնացորդները, որոնք ամբողջական են դարձնում պարտատոմսերի գծով կրեդիտորական պարտքերի մարումները: Այս տեղեկատվությունը գույքորդում է պարտատոմսերի պարտքային գումարների և վճարման ենթակա մայր գումարների համեմատական ներկայացմամբ, որը փաստում է հաշվետու ժամանակաշրջանում բավարար ֆինանսական միջոցների առկայությունը (53,349 մլն ՀՀ դրամ և 153,002 ԱՄՆ դոլար):

Հատկանշական է, որ մասնագիտական գրականության մեջ առաջարկ է արվում կիրառելու արժեթղթավորման հիմնադրամների կողմից ստանձնած պարտավորությունների մարման ֆինանսական գործակիցներ, որպեսզի ներկայացվեն հիմնադրամի կարողությունները՝ տեղաբաշխված պարտատոմսերի արժեկտրոնների վճարումից առաջ և հետո<sup>122</sup>: Այսպես, «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ Լ»-ի մատչելի ֆինանսական միջոցներով արժեկտրոնների փոխհատուցման համապատասխան գործակիցները հաշվարկված են աղյուսակ 2.3.6-ում, որոնք ներկայացնում են, թե հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական անհրաժեշտ ծածկույթը քանի անգամ է գերազանցում ներդրողների պարտավորությունները: Եվ բնականաբար, եթե նկատվում է ֆինանսական համապատասխան գործակիցների աճ, ապա արձանագրվում է ակտիվների արժեթղթավորման գործընթացի ֆինանսական կայունությունը:

Աղյուսակ 2.3.6

<sup>122</sup> Стивен Ли Шварц. Алхимия секьюритизации активов. Журнал ЗАКОН № 12, 2008

Արժեթղթավորման արդյունքում ձևավորված պարտատոմսերի մարման \$ ինանսական պաշարի գործակիցներ <sup>123</sup>

Գործակիցներ	Դրամային	Դոլարային
մատչելի միջոցներ / արժեկտրոնների վճարումներ	54,286,980/937,146 = 57,93	155,775/2,773 = 56,17
մատչելի միջոցներ՝ արժեկտրոնների վճարումից հետո / պարտատոմսի վճարման ենթակամայր գումար	53,349,834/24,990,560 = 2,134	153,002/130,498 = 1,172

Սակայն, մեր կարծիքով, պարտավորությունների փոխհատուցման գործակիցների կիրառումը արդյունավետ կարող է համարվել իրավիճակային վերլուծության տեսանկյունից: Իսկ արժեթղթավորման \$ ինանսական կայունության գնահատումը առավել իրատեսակ է դառնում, երբ դիտարկվում են ոչ թե պարտավորությունների վճարման համար մատչելի \$ ինանսական միջոցների մնացորդները՝ այլ այդ միջոցները ձևավորող դրամական ներհոսքերի և արտահոսքերի շարժը: Հետևաբար, արժեթղթավորման պարտավորությունների մարման տեսանկյունից որքան ներդաշնակ են ձևավորվում դրամական ներհոսքերն և արտահոսքերը, այնքան իրատեսակ է համարվում ակտիվների արժեթղթավորման գործընթացի \$ ինանսական կայունությանը տեսանելի ապագայում:

Ակտիվների արժեթղթավորման \$ ինանսական կայունության պահպանման համար կարևորվում է պարտատոմսերի գնորդների նկատմամբ հիմնադրամի վճարունակությունը, որը մեկնաբանվում է հետևյալ կերպ՝

<sup>123</sup> Հաշվարկված է աղյուսակ 2.3.5-ի տվյալներով:

$$P+R \geq E+F+C$$

որտեղ՝

P-ն -վարկի մայր գումար ,

R-ը -տոկոսագումար ,

E-ն - ծախս (նախաձեռնողի միջնորդավճար + հիմնադրամի պահպանման ծախսեր + կառավարչի միջնորդավճարներ + այլ ծախսեր /ապահովագրում, վարկանիշավորում,բանկային երաշխիք /),

C-ն - պարտատոմսերի գծով վճարվող ամսական տոկոսադրույք :

Ակտիվների արժեթղթավորման գործընթացի ֆինանսական կայունություն գնահատման մեր կողմից առաջարկվող մոտեցումը հմարավորություններ է ստեղծում .

Առաջին , գնահատելու արժեթղթավորման հիմնադրամի կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական կարողությունները՝ մարելու թողարկված պարտատոմսերի գծով պարտավորությունները :

Երկրորդ , գնահատելու արժեթղթավորող հիմնադրամում դրամական ներհոսքերի և արտահոսքերի ներդաշնակություն աստիճանը և բացահայտելու ներդրողների նկատմամբ վճարունակություն խաթարման միջանկյալ ժամանակային ռիսկերը :



## **Գ Լ ՈՒ ԽՅ ԱԿՏԻՎՆԵՐԻ Ի ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ Հ ԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ ՀՀ - ու մ**

### **3.1 Ակտիվների արժեթղթավորման տնտեսական գնահատման մոտեցումների վերլուծությունը**

Ակտիվների արժեթղթավորումը, հանդիսանալով տնտեսության աշխուժացման գործիք, որպես կանոն հետազոտողների շրջանում հիմնականում ընկավ-վում է վերաֆինանսավորման շրջափոխի լիարժեք իրացման տեսանկյունից: Այսինքն, ակտիվների արժեթղթավորումը տնտեսական առումով դիտարկ-վում է «կազմակերպությունների ֆինանսական ակտիվները պարտատոմսերի փոխակերպում-արժեթղթերի տեղաբաշխում-վերավարկավորում-պարտատոմսերի մարում» շրջափոխի անխափան-թյան համատեքստում, այլ ոչ թե այդ շրջափոխի տնտեսական արդյունավետության շրջանակում: Հենց այս առումով, մասնագիտական գրականությու-նում կարծիք է հայտնվում առավել ընդգրկուն տնտեսական գնահատական տալու ակտիվների արժեթղթավորմանը, նաև շեշտադրումներ կատարելով այդ գործընթացի միկրո- և մեզամ-մակրոտնտեսական եկամտաբերությանը<sup>124</sup>:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում վերլուծության է ենթարկվում ֆինանսական ակտիվների արժեթղթերի փոխա-կերպման գործընթացը, և դրանցով պայմանավորված դրամական հոսքերը, և ոչ թե արժեթղթավորման տնտեսական եկամտաբերությունը<sup>125</sup>: Այնինչ, մեր

<sup>124</sup> *Smallman S.* Securitization and the Global Market. Chicago: Probus Publishing Company, 1993. p. 104 (617 p.)


<sup>125</sup> Яразян А.Т. // Микрофинансирование в контексте предотвращения эмиграции из РА // Материалы межвузовской научной конференции «Проблемы развития бухгалтерского учета и аудита в Республике Армения», Международный центр обучения бухгалтерии, Ереван, 2015, 10-11 ноября, с. 79-88

կողմից կարևորվում է նաև ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքների չափումը՝ այսինքն այդ գործընթացի տնտեսական եկամտաբերության գնահատումը: Այդ առումով, առաջարկում ենք ակտիվների արժեթղթավորումը հատվածավորել ըստ գործընթացային ոլորտների (տես գծապատկեր 3.1.1) և գնահատել համապարփակ տնտեսական եկամտաբերությունը (R) արժեթղթավորման գործընթացի ողջ շղթայում, այսինքն՝ \$ինանսական կազմակերպություններում (B), արժեթղթավորող հիմնադրամներում (S) և պարտատմսերի վաճառքից ստացված հասույթի հենքով վերավարկավորող տնտեսության ոլորտներում (C).

$$\Sigma R = S + \Sigma B + \Sigma C$$



↔ վաճառահանվող պարտատմսերով ֆինանսական ակտիվների



### Ֆինանսական հոսքեր

Գծապատկեր 3.1.1 Ակտիվների արժեթղթավորման գործընթացն ըստ ուղորտների<sup>126</sup>

Որպես կանոն, արժեթղթավորող հիմնադրամները ոչ առևտրային կազմակերպություններ են, շահույթ չեն հետապնդում, ուստի արժեթղթավորման տնտեսական եկամտաբերությունն այս ուղորտում հիմնականում զրոյացվում է (S=0): Եվ այն դեպքերում, երբ այդ կազմակերպությունները շահույթահարկ են վճարում, ապա այն տեղի է ունենում հարկային հաշվետու ժամանակահատվածում (ֆինանսական տարի) հիմնադրամների եկամուտների և ծախսերի ոչ հավասարաչափ բաշխման արդյունքում, երբ ձևավորվում է շահույթահարկի գծով հարկվող եկամուտ (տես աղյուցակներ 3.1.1 և 3.1.2):

#### Աղյուցակ 3.1.1

«Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ Լ»-ի դրամական հոսքերի մասին 2017 թ. հաշվետվություն (հազ.դրամ)<sup>127</sup>

Չոդվածներ	01.01.2017 - 30.06.2017	01.01.2016 - 30.06.2016
Տարվա արդյունք	22,550	32,826
<b>Ճշգրտումներ</b>		
Տոկոսային եկամուտ	(29,911)	(56,290)
Տոկոսային ծախս	11,989	49,710
Շահույթահարկի գծով	7	2,665

<sup>126</sup> Կազմված է առենախոսի կողմից հիմք ընդունելով տեսական մոտեցումները:

<sup>127</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ Լ»-ի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, Երևան 15.09.2017, էջ 17

փոխհատուցում		
Արժեզրկման հակադարձումից օգուտ	(3,281)	(4,418)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ	528	265
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,882	24,758
Դեբիտորական պարտքերի փոփոխություններ	(880)	14,504
Վարկերի փոփոխություն	198,148	348,283

Աղյուսակ 3.1.1-ի շարունակություն

Հոդվածներ	01.01.2017 - 30.06.2017	01.01.2016 - 30.06.2016
Այլ պարտավորություններ փոփոխություն	(2,613)	(125,875)
<b>Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</b>	<b>196,537</b>	<b>261,670</b>
Վճարված տոկոսներ	(13,205)	(51,923)
Ստացված տոկոսներ	33,659	78,627
Վճարված շահույթահարկ	(325)	0
<b>Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) գուտ</b>	<b>216,666</b>	<b>288,374</b>

<b>դրամական միջոցներ</b>		
Պարտատոմսերի մարումից ելքեր	(202,807)	(369,320)
<b>Ֆինանսավորման գործունեությունից ստացված գումարական միջոցներ</b>	<b>(202,807)</b>	<b>(369,320)</b>
Դրամական միջոցների գումարաճ / նվազում	<b>13,859</b>	<b>(80,947)</b>
Փոխարժեքի ազդեցություն	(359)	327
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	76,880	140,230
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	<b>90,380</b>	<b>59,610</b>

Այս առումով, մեր կողմից դիտարկման է ենթարկվում ոչ թե պարտատոմսերի գնի որոշումը, այլ դրանց տեղաբաշխմանն առնչվող դրամական հոսքերի և դրանցից ակնկալվող տնտեսական եկամտաբերությունը՝ ըստ արժեթղթավորման գործընթացի առանձին փուլերի: Նման մոտեցմամբ հնարավորություն է ստեղծվում ոչ միայն մշտադիտարկման ենթարկել ակտիվների արժեթղթավորման գործընթացի դրամական հոսքերը, այլ և կատարել արժեթղթավորման տնտեսական արդյունավետության հաշվարկներ:

Հետևաբար, առավել ապես կարևորվում է արժեթղթավորման տնտեսական եկամտաբերության գնահատումը այդ գործընթացի (B) և (C) ոլորտներում, այսինքն՝ ֆինանսական կազմակերպություններում (առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ), ինչպես նաև վերաֆինանսավորման ոլորտում (վարկառուների մոտ):

Աղյուսակ 3.1.2

«Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի եկամուտներին և տոկոսային ծախսերի փոփոխությունը 2016-2017թթ. (հազ. դրամ)<sup>128</sup>

Ցուցանիշներ	01.01.2017 - 30.06.2017	01.01.2016 - 30.06.2016
<b>Տոկոսային եկամուտներ</b>		
Հաճախորդներին տրված վարկերից	23,227	86,607
Ընթացիկ հաշիվներից	6,684	2,168
Ընդամենը տոկոսային եկամուտներ	<b>29,911</b>	<b>88,775</b>
<b>Տոկոսային ծախսեր</b>		
Թողարկված պարտքային արժեթղթերի գծով	(11,989)	(49,710)
Ընդամենը տոկոսային ծախսեր	<b>(11,989)</b>	<b>(49,710)</b>
Չուտոկոսային եկամուտ	17,922	39,065

Գործնականում, շատ ավելի հեշտ է արժեթղթավորման տնտեսական եկամտաբերության գնահատումը բանկերում և վարկային կազմակերպություններում (տես գծապատկեր 3.1.1. Երկրորդ):

Այսպես, «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի վարկային փուլը 2015թ. դեկտեմբերին ձևավորվել է 5 ունիվերսալ վարկային կազմակերպությունների (ՈւՎԿ) կողմից (տես աղյուսակ 3.1.3), որոնք պարտատմսերի վաճառքից ստացված

<sup>128</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, Երևան 30 հունիս, 2017, էջ 17

գումարները վերառնում են վարկավորման նոր  
 ոլորտներ՝ տրամադրել են նոր վարկեր:

Պարզապես համադրելով հիմնադրամի  
 ֆինանսական պաշարները ապահովող ՈւՎԿ-ների  
 վարկային տոկոսային ծախսերը, նույն կազմակեր-  
 պության ներկայումս կողմից նոր վարկերի տրամադրման  
 տոկոսային եկամուտների հետ, հնարավոր կլինի  
 որոշելու արժեթղթավորման տնտեսական  
 արդյունքը ԵՆՈՐՏՈՒՄ (տես գծապատկեր 3.1.1):

### Աղյուսակ 3.1.3

«Վարկային պորտֆելի արժեթղթավորման  
 հիմնադրամ»-ի ձեռքբերված վարկերի կազմը՝ ըստ  
 արժեթղթավորման նախաձեռնողների <sup>129</sup>

Նախաձեռնողներ	Դրամային պորտֆել (հազ.դրամ)	Դոլարային պորտֆել (հազ.դոլար)
Կամուրջ ՈՒՎԿ	198,242	392.3
ՔԱՐԴ Ագրո- Կրեդիտ ՈՒՎԿ	164,149	-
Գառնի-Ինվեստ ՈՒՎԿ	35,247	-
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ	67,592	272.7
Նոր Յորիզոն ՈՒՎԿ	30,647	593.9
Ընդամենը	495,877	1,258.9

Ուսումնասիրողությունները ցույց են տալիս, որ  
 ակտիվների արժեթղթավորմանը մասնակցած ՅՅ  
 վարկային կազմակերպություններն իրենց

<sup>129</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի  
 ֆինանսական հաշվետվությունների կից  
 ծանոթագրություններ, Երևան 15. օգոստոս, 2017, էջ 14

հրապարակած \$ ֆինանսական հաշվետվություններում առանձին չեն ներկայացնում արժեթղթավորման գործընթացի տնտեսական արդյունքը: Ամփոփ ցուցանիշներով են ներկայացվում նաև վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և գույքի շահույթի աճի մեծությունները (աղյուսակ 3.1.4), սակայն ձևավորված գույքի կազմում չի հստակեցվում ակտիվների արժեթղթավորումից ստացվող բաժնեմասը:

Աղյուսակ 3.1.4

ՀՀ վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների և շահույթի մեծությունները (հազ.դրամ)<sup>130</sup>

Ցուցանիշ	31.12.2016	30.06.2017	Աճ (%)
Ակտիվներ	391 978 700	430 982 766	10,0%
Պարտավորություններ	209 939 988	223 648 356	6,5%
Կապիտալ	182 038 712	207 334 410	13,9%
Չուտշահույթ	19 231 554	21 678 314	12,7%

ՀՀ ԿԲ հաշվետվությունները վկայում են, որ ըստ ակտիվների (RoA), ըստ կապիտալի (RoE) շահույթաբերության ցուցանիշները 2017 թվականին՝ 2016 թվականի համեմատությամբ վարկային կազմակերպություններում աճել են համապատասխանաբար 6,7 և 13,7 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 10,3% և 22,2%: Մյուս կողմից, 2017 թվականին այդ կազմակերպությունների վարկային

<sup>130</sup> ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, //www.cba.am



պորտֆելում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0,5 տոկոսային կետով և կազմել 4,1%, իսկ ըստ տնտեսության ճյուղերի բաշխվածության՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները համեմատաբար բարձր են սպառողական, հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին, տրանսպորտի և կապի ոլորտներին տրամադրված վարկերում համապատասխանաբար 16,1%, 10,0% և 7,6%<sup>131</sup>: Այս պարագայում նույնպես տեղեկատվություն չի հրապարակվում չաշխատող վարկերի կազմում արժեթղթավորումից գոյացած գումարների վերաբերյալ :

Աղյուսակ 3.1.5

Վարկային պորտֆելի կառուցվածքը ՀՀ  
 ունիվերսալ վարկային  
 կազմակերպություններում 2016թ.(հազ.դրամ)<sup>132</sup>

Վարկավորման ուղղություններ	\$ինկա	Կամուրջ	Նոր հորիզոն	Քարդ Ազրոկրեդիտ
Գյուղատնտեսական վարկեր	7914237	5531031	3898093	3164225
Ապրանքային վարկեր	7865044	1012380	995137	-
Սպառողական վարկեր	-	3589987	2311747	-
Արդյունաբերական վարկեր	1932631	157779	60534	-
Այլ վարկեր	3571627	61280	96717	708781

<sup>131</sup>ՀՀ Կենտրոնական բանկ, \$ինանսական կայունության  
 հաշվետվություն 2017թ.1-ին կիսամյակի հաշվետվություն,  
 Երևան, 2017թ., էջ 39

<sup>132</sup>Կազմված է ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից  
 հրատարակված տարեկան հաշվետվությունների հիման վրա:

Ներկայումս նաև դժվարություններ են առաջանում վերավարկավորման ոլորտում արժեթղթավորման արդյունքը գնահատելիս (Շոկորտ): Ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքը թերևս տեսանելի է, սակայն մեթոդաբանական առումով դժվար չափելի է վերավարկավորման ոլորտում, որտեղ վարկային ներդրումների տեսքով \$ինանսավորվում են գործարարության կոնկրետ ոլորտներ: Ընդհանուր առմամբ մասնագիտական գրականությանում հեղինակները անդրադառնալով այս հիմնախնդրին, նշում են, որ դեռևս գործնականում առևտրային բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից ուղարկվող չի դարձվում վարկային տեղաբաշխումների տնտեսական արդյունավետությանը<sup>133</sup>: \$ինանսական կազմակերպությունների վարկառուների առումով շահագրգռված են հիմնականում տրամադրված վարկային պարտավորությունների մարման մասով, և որպես կանոն՝ շեշտը չեն դնում գործարարության տվյալ ոլորտում փոխառությունների տնտեսական եկամտաբերության գնահատականներին:

Հատկապես, եթե պարտատոմսերի վերածված արժեթղթավորված ակտիվների վաճառքի հասույթը վերառնողվում է միկրո\$ինանսավորման ոլորտ և փոխառության է վերածվում միկրո և միջին բիզնեսում, ապա նույնիսկ ռիսկեր են առաջանում վարկավորման բացասական տնտեսական հետևանքների ձևավորման ուղղությամբ: Փորձը ցույց է տալիս, որ միկրո ձեռնարկատերերը կամ փոքր բիզնեսի ներկայացուցիչները ունիվերսալ վարկային կազմակերպություններից ստանալով

<sup>133</sup> Яразян А.Т. // Микрофинансирование в Армении // Вестник УМО, Москва, 2014, №2, с. 143-146

փոխառու թյուր և դրանք արդյունավետ  
չօգտագործելով, փոշիացնում են այդ ֆինանսական  
ռեսուրսները և գնում են սնանկացման<sup>134</sup>:  
Յայաստանի Յանրապետությունում 2015 թվականին  
իրականացված ակտիվների արժեթղթավորման գոր-  
ծընթացից ձևավորված ֆինանսական ռեսուրսները  
ուղարկվել են վարկային կազմակերպությունները  
տեղաբաշխել են գործարարության մի շարք  
ոլորտներում (տես աղյուսակ 3.1.5), սակայն դեռևս չի  
տրվել գնահատական, թե ինչ արդյունավետությամբ  
են դրանք օգտագործվել և ինչպիսին է վերավարկա-  
վորման տնտեսական եկամտաբերության չափը՝ ըստ  
ներդրումային առանձին ուղղությունների:

Այս առումով, ակտիվների արժեթղթավորման  
գործընթացի վերջին փուլում, երբ պարտատոմսերի  
վաճառքից հասույթը փոխակերպվում է վարկային  
ռեսուրսների, հիմնախնդիրներ են ծագում  
վերավարկավորման տնտեսական եկամտաբերության  
չափման, արձանագրման և առավել ևս, ամփոփման  
համար: Ուսումնասիրությունները ցույց են  
տալիս, որ այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ  
առաջարկներ են արվում կազմակերպել  
վիճակագրական հաշվառում և ամփոփել այնպիսի  
տեղեկատվություն, որը կընդգրկեր  
գործարարության նպատակային վարկավորման  
արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծման,  
արտագաղթի կասեցման, բնակչության եկամուտների  
աճի, հարկային մուտքերի ավելացման ցուցա-  
նիշների շրջանակ<sup>135</sup>:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է  
հայտնվում նաև, որ եթե մակրոտնտեսական

<sup>134</sup> Хачатрян Н., Яразян А. // Улучшение системного управления микрофинансирования в РА // Ա կ ու ն ք ե Պ Յ ,  
2015, №2(12), է ջ . 114-120  
<sup>135</sup> Milford Bateman Microfinance as a development and poverty reduction policy: is it everything it's cracked up to be? Overseas  
Development Institute, March 2011, p. 5

մակարդակով դժվար իրագործելի է վարկային տեղաբաշխումների տնտեսական եկամտաբերության գնահատումը (արտագաղթի կասեցում, մարդկային կապիտալի փոշիացման ռիսկերի նվազեցումնայլն), ապա միկրոմակարդակով գործարարության վարկավորման տնտեսական եկամտաբերությունը բիզնես միավորներում հնարավոր է չափելի դարձնել և անգամ գնահատել բալային համակարգով (տես աղյուսակ 3.1.6):

Աղյուսակ 3.1.6

Ֆինանսավորման արդյունքների վարկանիշային գնահատման առաջարկվող ցուցիչներ<sup>136</sup>

Ցուցիչ	Բիզնես միավորների ֆինանսավորման սոցիալ-տնտեսական ցուցիչներ	Ցուցիչի նշանակություն	Բալային գնահատում
A	Վարկառուների եկամուտների աճ (%)	5% < A < 10%	=1
		10% < A < 20%	=2
		20% < A < 30%	=3
		30% < A < 40%	=4
		A > 50%	=5
P	Նորաշխատատեղերի ստեղծումը բիզնես միավորներում (մարդ)	P=1	=3
		P=2	=4
		P=3	=5

Աղյուսակ 3.1.6-ի շարունակություն

Ցուցիչ	Բիզնես միավորների ֆինանսավորման սոցիալ-տնտեսական ցուցիչներ	Ցուցիչի նշանակություն	Բալային գնահատում
--------	--	-----------------------	-------------------

<sup>136</sup> Яразян Артак, Становление и развитие микрофинансирования малого предпринимательство (на примере республики Армения), автореферат, диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет», Ереван 2016, стр.17


C	Մի կրոնկազմակերպությունների անդամների սոցիալական նվազագույն պահանջների բավարարում (%)	40% < C < 50%	=1
		50% < C < 60%	=2
		60% < C < 70%	=3
		70% < C < 80%	=4
		C > 90%	=5
H	Չարկային մուտքերի ավելացում (%)	5% < H < 10%	=1
		10% < H < 15%	=2
		15% < H < 20%	=3
		20% < H < 25%	=4
		H > 30%	=5
B	Գործազուրկների տեսակարար կշիռը ընտանիքում (%)	50% < B < 60%	=1
		40% < B < 50%	=2
		30% < B < 40%	=3
		20% < B < 30%	=4
		B < 20%	=5
П	Բիզնես միավորներում վերաորակավորված աշխատակիցների քանակը (մարդ)	П = 1	=3
		П = 2	=4
		П = 3	=5

Ընդ որում, քանի որ բիզնես միավորներում վարկավորման սոցիալ-տնտեսական եկամտաբերության ցուցիչները տարբեր չափիչներով են ներկայացվում, ապա եկամտաբերության միասնական չափման մոտեցում է առաջարկվում բալերի կիրառումը:

Մեր կարծիքով, մի կողմից վարկային տեղաբաշխումների սոցիալ-տնտեսական ցուցիչները չափման միասնական բալային համակարգով ներկայացնելը լուծում է գնահատման միասնականության և համեմատական դաշտի ձևավորման խնդիրը, բայց մյուս կողմից այնուհետև

պայմանական թյուրեւն էր՝ կապված յուրաքանչյուր ցուցիչի նտերվալի գծով բալային ամրագումներին հետ (տես աղյուսակ 3.1.6):

Յետևաբար, առավել հիմնավոր ենք համարում ակտիվների արժեթղթավորման արդյունքում ձևավորված վարկային ներդրումների տնտեսական եկամտաբերությունը բիզնես միավորներում գնահատել դրամական չափիչներով՝ ըստ առաջացման առանձին ոլորտների, որով համարելի կդառնան ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքները այդ գործընթացի բոլոր փուլերում (S, B, C) և հնարավորություն կստեղծվի համապարփակ գնահատելու տնտեսական եկամտաբերությունը (R) արժեթղթավորման գործընթացի ողջ շղթայում (տես գծապատկեր 3.1.2).



Գծապատկեր 3.1.2 Ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքների ձևավորման տեղեկատվական կենտրոնները <sup>137</sup>

Սակայն, ակտիվների արժեթղթավորման համընդհանուր եկամտաբերության գնահատումը հնարավոր է իրականացնել առանց համապատասխան

<sup>137</sup> Կազմվել է առենախոսի կողմից հիմքը նդունելով վերլուծական արդյունքները:

տեղեկատվական ապահովվածություն, որը պահանջում է .

- տեղեկատվական հոսքերի համակարգման նպատակային ինստիտուտի ձևավորում, ընդգրկելով ակտիվներին արժեթղթավորման ողջ շղթան ,
- ոչ միայն ակտիվներին արժեթղթավորման փոխակերպման ֆինանսական հոսքերի շրջափոխային մշտադիտարկում , այլև դրան գույքահետք արժեթղթավորման տնտեսական արդյունքների չափում և գնահատում ըստ ձևավորման ոլորտների ,
- արժեթղթավորման տնտեսական արդյունքների ամփոփ հաշվառում այնպես , որ տեղեկատվական հոսքերի արձանագրումը իրականացվի անընդհատություն և հաշվետվողականություն սկզբունքով :

**3.2 Արժեթղթավորման արդյունավետություն  
տեղեկատվական հոսքերի ձևավորման  
հիմնախնդիրները**

Ակտիվներին արժեթղթավորման գործընթացի տնտեսական գնահատումը գործնականում առավելապես միտված է պարտատոմսերի փոխակերպման և հետգնման դրամական հոսքերին : Այս դեպքում կարևորվում է արժեթղթավորման ավարտուն շրջափոխի ֆինանսական կայունությունը : Յետևաբար , նման պարագայում հիմնականում շեշտադրումներ են կատարվում վարկային փոխակերպման պարտատոմսերի սահուն փոխակերպման , արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող դրամական ներհոսքերի լիարժեքություն , վերավարկավորման լրացուցիչ ռեսուրսների

ձևավորման վրա, շրջանցելով արժեթղթավորման տնտեսական արդյունքի գնահատումը:

Սակայն, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, արժեթղթավորման գործընթացի ֆինանսական կայունությունից բացի, ոչ պակաս կարևոր է նաև պարտատոմսերով «երկար փողերի» ձևավորման գործընթացի տնտեսական արդյունքների գնահատումը, որոնք առնչվում են արժեթղթավորման ողջ շղթային<sup>138</sup>: Միայն այս դեպքում է հնարավոր դառնում որոշել ոչ միայն արժեթղթավորման կայունությունը ֆինանսական տեսանկյունից, այլև գնահատել այդ գործընթացի տնտեսական նպատակահարմարությունը:

Սակայն, դրա հետ մեկտեղ, ինչպես գործնականում, այնպես էլ տեսություն մեջ դեռևս լուծված չեն ակտիվների արժեթղթավորման արդյունավետության գնահատման տեղեկատվական հոսքերի ներկայացման խնդիրները, և այս առումով, մեր կողմից կարևորվում է արժեթղթավորման արդյունքների ոլորտային հաշվառման համակարգի ստեղծումը «վարկային փուլը արժեթղթերով ֆինանսական ակտիվների փոխակերպում-պարտատոմսերի տեղաբաշխում-վերավարկավորում-պարտատոմսերի հետգնում» ամբողջական շղթայում:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև, որ արժեթղթավորման նպատակադրումը չի ենթադրում միայն «երկար փողերի» ձևավորում, այլ գլոբալ առումով նպատակ է հետապնդում արժեթղթերի շուկայի ակտիվացում և տնտեսական արդյունավետության բարձրացում, որը և պահանջում է արժեթղթավորման ամբողջ

<sup>138</sup> Добрынин А. В., Беркалиева М. Е., Гуров М. П., Мутовин С. И. Ипотечные ценные бумаги. М.: МАКС Пресс, 2005. стр. 57, (188 с.)



գործընթացի տնտեսական արդյունքի գնահատում<sup>139</sup>: Սակայն, պետք է նշենք, որ ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքի համապարփակ գնահատումը, և առավել ևս մշտադիտարկումն ու հաշվառումը գործնականում դեռևս իր կիրառումը չի գտնում մի շարք պատճառներով:

Նախևառաջ, դեռևս ակտիվների արժեթղթավորման գործընթացը հիմնականում դիտարկվում է գուտ գործընթացի ֆինանսական մշտադիտարկման, և ոչ թե տնտեսական արդյունավետության տեսանկյունից: Փորձը ցույց է տալիս, որ ոչ արժեթղթավորող հիմնադրամները, և ոչ էլ վարկային ամբարներ (վարկային փոփոխություն) ձևավորող բանկերը դեռևս շահադրդված չեն գնահատելու, թե ինչպես է արժեթղթավորումն ազդում արժեթղթերի շուկայի զարգացման վրա, կամ թե ինչպիսին է «պասիվ փողերի» ակտիվացման տնտեսական արդյունքը՝ վերավարկավորման ոլորտում:

Բացի այդ, դեռևս գործնականում իր լուծումը չի գտել ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքների տեղեկատվական հոսքերի համակարգման խնդիրը: Ակտիվների արժեթղթավորման գործընթացում ընդգրկված բոլոր կազմակերպչական միավորները տեղեկատվության փոխանցման առումով գործում են միմյանցից անկախ, վարում են առանձնացված հաշվապահական հաշվառում: Յետևաբար, նման պարագայում անհրաժեշտության է ծագում ձևավորելու տեղեկատվական կենտրոն, որը ոչ միայն կհամակարգեր ակտիվների արժեթղթավորման տեղեկատվական հոսքերը, այլև դրանց գծով անընդհատության

<sup>139</sup> Кондрацкая Н.В., Краткий обзор основных видов секьюритизации, // Право и экономика, 2016, #5, стр 28


ս կ գ բ ու ն ք ո վ                    կ կ ա գ մ ա կ ե ր պ ե ր                    հ ա մ ա պ ա ր փ ա կ  
հ ա շ վ առ ու մ :

Այ ս ն պ ա տ ա կ ո վ , մ ե ր կ ո ղ մ ի ց առ ա ջ ա ր կ վ ու մ է  
ա ր ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն                    հ ի մ ն ա դ ր ա մ ն ե ր ի                    կ ա գ մ ու մ  
ս տ ե ղ ծ ե լ հ ա տ ու կ ս տ ո ր ա ք ա ժ ա ն ու մ , ո ր ը կ ա մ փ ո փ ե ր  
ա կ տ ի վ ն ե ր ի                    ա ր ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն                    գ ո ր ծ ը ն թ ա ց ու մ  
ձ և ա վ ո ր վ ո ղ տ ն տ ե ս ա կ ա ն ա ր դ յ ու ն ք ն ե ր ը ` ը ս տ ի ր ե ն ց  
ձ և ա վ ո ր մ ա ն                    կ ե ն տ ր ո ն ն ե ր ի ,                    և                    դ ր ա ն ո վ  
հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն                    կ ս տ ե ղ ծ ե ր                    գ ն ա հ ա տ ե լ ու  
ա ր ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն                    տ ն տ ե ս ա կ ա ն  
ա ր դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը `                    տ ն տ ե ս ու թ յ ա ն                    մ ի կ ր ո                    և  
մ ա կ ր ո մ ա կ ա ր դ ա կ ո վ (տ ե ս գ ծ ա պ ա տ կ ե ր 3.2.1):

Ն պ ա տ ա կ ա հ ա ր մ ա ր                    ե ն ք                    հ ա մ ա ր ու մ                    ա կ տ ի վ ն ե ր ի  
ա ր ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն                    գ ո ր ծ ը ն թ ա ց ի                    ա մ ք ո ղ ջ շ ղ թ ա յ ու մ  
ձ և ա վ ո ր վ ո ղ                    տ ն տ ե ս ա կ ա ն                    ա ր դ յ ու ն ք ն ե ր ը                    ն ե ր առ ե լ  
կ ե ն տ ր ո ն ա ց վ ա ծ                    հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն                    հ ա շ վ առ մ ա ն  
հ ա մ ա կ ա ր գ ու մ : Ո ր պ ե ս                    կ ա ն ո ն ,                    կ ր կ ն ա կ ի                    գ ր ա ն ց մ ա ն  
ե ղ ա ն ա կ ո վ                    հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն                    հ ա շ վ առ ու մ ը                    ի ր ա կ ա -  
ն ա ց վ ու մ                    է                    կ ա գ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր ի                    ն ե ր ս ու մ ,                    և  
ն պ ա տ ա կ ա դ ր վ ու մ                    է                    տ ն տ ե ս ա կ ա ն                    գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն  
ա ր դ յ ու ն ք ն ե ր ի                    հ ա շ վ ե տ վ ո ղ ա կ ա ն ու թ յ ա ն ը ,                    ե ր ք  
պ ա ր ք ե ր ա ք ա ր                    կ ա գ մ վ ու մ                    ե ն                    \$ ի ն ա ն ս ա կ ա ն                    կ ա մ  
կ առ ա վ ա ր չ ա կ ա ն                    հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն ն ե ր :                    Ս ա կ ա յ ն ,  
հ ն ա ր ա վ ո ր                    է                    ն ա ն                    կ ր կ ն ա կ ի                    գ ր ա ն ց մ ա ն                    հ ե ն ք ո վ  
կ ա գ մ ա կ ե ր պ ե լ                    հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն                    հ ա շ վ առ ու մ                    տ ե ղ ե կ ա -  
տ վ ա կ ա ն                    ա յ ն                    հ ա մ ա կ ա ր գ ի                    հ ա մ ա ր ,                    ո ր ը                    ձ և ա վ ո ր վ ու մ                    է  
կ ա գ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր ի ց                    դ ու ր ս ,                    ք ա յ ց  
փ ո խ կ ա պ ա կ ց վ ա ծ                    է                    վ ե ր ջ ի ն ի ն ն ե ր ի ս                    գ ո ր ծ ու -  
ն ե ու թ յ ա ն                    հ ե տ :

Վ ե ր ո ն շ յ ա լ                    հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն                    հ ա շ վ առ մ ա ն  
մ ո տ ե ց ու մ ը                    մ ա ս ն ա գ ի տ ա կ ա ն                    գ ր ա կ ա ն ու թ ա ն                    մ ե ջ  
հ ե ղ ի ն ա կ ն ե ր ն                    առ ա ջ ա ր կ ու մ                    ե ն                    ն ա ն                    ա յ ն                    դ ե պ ք ու մ ,  
ե ր ք                    տ ե ղ ե կ ա տ վ ա կ ա ն                    փ ո խ կ ա պ ա կ ց վ ա ծ                    շ ղ թ ա                    է  
ա ր ձ ա ն ա գ ր վ ու մ                    տ ն տ ե ս ու թ յ ա ն                    տ ա ր ք ե ր

մակարդակներում (ճյուղ, ոլորտ, տարածաշրջան) գործող կազմակերպությունների փոխհարաբերություններում<sup>140</sup>:



Գծապատկեր 3.2.1 Ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունքների տեղեկատվական հոսքերի համակարգումը<sup>141</sup>

Եվ քանի որ ակտիվների արժեթղթավորումը իր բնույթով չի սահմանափակվում մեկ կազմակերպության շրջանակում, և մյուս կողմից, տնտեսական եկամտաբերության հետագիծ էթոզնում ինչպես ներդրողների, այնպես էլ բանկերի, վարկառուների շրջանում, ուստի ոչ միայն հնարավոր է դառնում, այլև անհրաժեշտություն է առաջանում համակարգելու այդ

<sup>140</sup> Абрютинa М.С., От бухгалтерского учета к национальным счетам, учебное практическое пособие, М., ЗАО, «Фин-татинформ», 2001, стр. 54-55

<sup>141</sup> Կազմված է առենախոսի կողմից հիմքը նդունելով տեսական մոտեցումները:

տեղեկատվությունը կենտրոնացված հաշվապահական հաշվառման միջոցով:

Այս նպատակով, մեր կողմից առաջարկվում են հատուկ հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնցով կարձանագրվեն, կհամակարգվեն և կամփոփվեն արժեթղթավորման տնտեսական արդյունքները (տես գծապատկեր 3.2.2): Ընդ որում, առաջարկվում են այնպիսի կառավարչական հաշիվներ, որոնք փոխկապակցված չեն կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հետ, սակայն մյուս կողմից, կրկնակի գրանցմամբ թղթակցություններով ներքին փոխկապակցվածություններն միմյանց հետ՝ ներկայացնելով արժեթղթավորման գործընթացի շղթային առնչվող տեղեկատվական համակարգ: Յետևաբար, առաջարկվող հաշիվները մնացորդ չեն ունենում և չեն թղթակցում հաշվապահական հաշվառման գործող հաշվային պլանում ընդգրկված ֆինանսական կամ կառավարչական հաշիվների հետ, քանի որ այս դեպքում գործում է ոչ ինտեգրացված հաշվառման սկզբունքը:


Ակտիվների արժեթղթավորման հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է և այդ կազմակերպության գործունեությունը չի կարող իրականացվել առանց վերադիր ծախսերի, որոնք ուղղված են արժեթղթերի ցուցակմանը, վարչարարությունը, վարկերի սպասարկմանը և այլն (տես աղյուսակ 3.2.1): Միայն այն դեպքում, երբ հիմնադրամի գործունեության եկամուտները գերազանցում են ծախսերին, ապա ձևավորվում են ֆինանսական հետևանքներ, որոնք ի դեպ հարկվում են շահույթահարկի արտոնյալ պայմաններով:

Այսպես, շահուժառուար կիբազան «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի գուտակտիվների հանրագումարն է<sup>142</sup>: ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված է նաև, որ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահուժառուար կը հաշվարկվում է 0,01% դրույքաչափով<sup>143</sup>: Բոլոր դեպքերում, (շահուժառուար կիբազա ձևավորելիս կամ հակառակը), արժեթղթավորման հիմնադրամի գործունեության համար մեր կողմից առաջարկվող հաշվի դեբետում գրանցվում է տնտեսական արդյունք (դրական, կամ գրոյական), որը թղթակցում է «Արժեթղթավորման արդյունավետության» հաշվի կրեդիտի հետ (տես գծապատկեր 3.2.2):

---

<sup>142</sup> ՀՀ Հարկային օրենսգրք, 2016թ., հոդված 104, կետ 2

<sup>143</sup> ՀՀ Հարկային օրենսգրք, 2016թ., հոդված 125, կետ 2



Գ ծ ա պ ա տ կ ե ր 3.2.2 Ա կ տ ի վ ն ե ր ի ար ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն ար դ յ ու լ ն ք ն ե ր ի հ ա մ ա պ ար փ ա կ հ ա շ վ առ մ ա ն առ ա ջ ար կ վ ո ղ մ ե խ ա ն ի գ մ ը ս ի ն թ ե տ ի կ ար ժ ե թ ղ թ ա վ ո ր մ ա ն պ ար ա գ ա յ ու մ <sup>144</sup>

Ի ն չ վ ե ր ա բ ե ր ու մ Է առ ա ջ ար կ վ ո ղ «Բ ա ն կ ե ր » հ ա շ վ ի ն , ա պ ա ա յ ս տ ե ղ ար ժ ե թ ղ ղ թ ա վ ո ր մ ա ն գ ո Ր ծ ը ն թ ա գ ի ն առ ն չ վ ո ղ տե ղ ե կ ա տ վ ա կ ա ն ար ձ ա ն ա գ Ր ու մ ն ե ր ը հ ա մ ե մ ա տ ա բ ար շ ա տ ե ն , ք ա ն ի ո Ր գ Ր ա ն ց վ ու մ ե ն ո չ մ ի ա յ ն վ ար կ ա յ ի ն փ ու լ ի ն առ ն չ վ ո ղ փ ո խ առ ու ն ե ր ի ց ս տ ա գ վ ո ղ տ ո կ ո ս ա յ ի ն ե կ ա մ ու տ ն ե ր ը , ա յ լ և տե ղ ա բ ա շ խ վ ա ծ պ ար տ ա տ ո մ ս ե ր ի գ ծ ո վ վ ճ ար վ ո ղ տ ո կ ո ս ա յ ի ն ծ ա խ ս ե ր ը : Ե վ ա յ դ տ ո կ ո ս ա յ ի ն ե կ ա մ ու տ ն ե ր ի ու ծ ա խ ս ե ր ի հ ա մ ա դ Ր ու մ ո վ Է լ ձ և ա վ ո Ր վ ու մ Է ա կ տ ի վ ն ե ր ի ար ժ ե թ ղ ղ թ ա վ ո ր մ ա ն Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ը ն դ հ ա ն ու Ր ար դ յ ու լ ն ք ը Բ ա ն կ ե ր ու մ , ո Ր ը «Բ ա ն կ ե ր » հ ա շ վ ի դ ե բ ե տ ի ց տե ղ ա փ ո խ վ ու մ Է

<sup>144</sup> Կ ա գ մ վ ա ծ Է ա տ ե ն ա խ ո ս ի կ ո ղ մ ի ց հ ի մ ք ը ն դ ու ն ե լ ո վ հ ե տ ա գ ո տ ու թ յ ա ն ար դ յ ու լ ն ք ն ե ր ը : «Ս ի ն թ ե տ ի կ » ար ժ ե թ ղ ղ թ ա վ ո ր մ ա ն դ ե պ ք ու մ տե ղ ա բ ա շ խ վ ա ծ վ ար կ ե ր ը մ ն ու մ ե ն առ և տ Ր ա յ ի ն Բ ա ն կ ի հ ա շ վ ե կ շ ռ ու մ :

«Արժեթղթավորման արդյունավետություն» հաշվի կրեդիտ (տես գծապատկեր 3.2.2):

Աղյուսակ 3.2.1

«Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի կոմիսիոն նայլ վերադիր ծախսերի փոփոխությունը 2016-2017թթ. (հազ.դրամ)<sup>145</sup>

Ծախսային հոդվածներ	01.01.2017	01.01.2016
	30.06.2017	30.06.2016
Վարկերի սպասարկման ծախսեր	(1,043)	(3,414)
Կառավարման վարձի ծախսեր	(1,389)	(3,874)
Պարտատոմսերի գուցակման ծախսեր	(374)	(774)
Մարքեթինգային ծախսեր	(270)	(898)
Ռեեստրավարման ծախսեր	(252)	(235)
Բանկային այլ ծախսեր	(153)	(219)
Ընդամենը կոմիսիոն նայլ վճարների ծախսեր	<b>(3,481)</b>	<b>(9,414)</b>

«Վարկառուներ» հաշիվն ամփոփում է ակտիվների արժեթղթավորման գործընթացի արդյունքները՝ վերավարկավորվող ոլորտի անդիսացող քիզնեսումիավորներում, երբ բանկերը պարտատոմսերի վաճառքից ստացված հասույթը վարկերի ձևով վերատեղաբաշխում են գործարարության ոլորտում՝ ակտիվացնելով իրենց նախորդ պասիվ վարկային ներդրումները: Այս դեպքում, նոր վարկառուները (քիզնեսումիավորները) համեմատում են բանկերից

<sup>145</sup> «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ»-ի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, Երևան 15. օգոստոս, 2017, էջ 17

ստացած փոխառու թյան ծախսերը՝ վարկավորման հետևանքով ձևավորված արդյունքի հետ: Այդ համեմատման դաշտում գտնվող ֆինանսական արդյունքներն արտացոլվում են «Վարկառուներ» հաշվի դեբետում, և նաև կրկնակի գրանցման սկզբունքով՝ «Արժեթղթերի արդյունավետություն» հաշվի կրեդիտում:

Ակտիվների արժեթղթավորման շրջափոխի ավարտին տնտեսական արդյունքների կրկնակի գրանցումով փակվում են մերկողմից առաջարկվող հավաքիչ-բաշխիչ «Վարկառուներ», «Բանկեր» և «Յիմնադրամի գործունեություն» հաշիվները, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է արժեթղթավորման տնտեսական արդյունքը՝ ըստ ձևավորման առանձին կենտրոնների (բիզնես միավորներ, բանկեր, հիմնադրամներ): Իսկ դրան գույքահեն, ակտիվների արժեթղթավորման գործընթացի տնտեսական արդյունքներն ամբողջությամբ ամփոփվում են «Արժեթղթերի արդյունավետություն» հաշվի կրեդիտում (տես գծապատկեր 3.2.2): Մյուս կողմից, հաշվի դեբետում արձանագրվում է տեղաբաշխված պարտատոմսերի արժեքը, որով և հնարավորություն է ստեղծվում գնահատելու ակտիվների արժեթղթավորման տնտեսական արդյունավետությունը (E) հետևյալ հարաբերությամբ.

$E = \frac{\text{ակտիվների արժեթղթավորման համընդհանուր տնտեսական արդյունք}}{\text{տեղաբաշխված պարտատոմսերի արժեք}}$

Այսպես, կիրառելով առաջարկվող հաշիվները և նրանցում տեղեկատվության համակարգման մեխանիզմը, հաշվապահական հաշվառման թղթակցություններով հնարավոր է ներկայացնել ակտիվների արժեթղթավորման շրջափոխի



տն տես սակասն արդյունքներին ամբողջական արդյունքը (տես հավելված 2):


Տեղադրելով հավելված 2-ի հաշվային թղթակցություններին արդյունքները առաջարկվող հաշիվներում, կարող ենք ընդհանրացնել ակտիվներին արժեթղթավորման գործընթացի տնտեսական համընդհանուր արդյունքը (տես գծապատկեր 3.2.3), որով կգնահատվի արժեթղթավորման արդյունավետությունը հետևյալ տեղեկատվությամբ.

Ակտիվներին արժեթղթավորման արդյունավետություն =

արժեթղթավորման համախառն տնտեսական արդյունք /

$$\text{տեղաբաշխված պարտատոմսեր} = (70 + 130 + 0) / 550 = 0,36$$

Այսպիսով, բանկային ակտիվներին արժեթղթավորումը ոչ միայն տնտեսապես նպատակահարմար էր վարկային փոփոխությունների համար, որտեղ տոկոսային ծախսերը գերազանցեցին եկամուտներին և ձևավորվեց տոկոսային 130 մլն դրամի շահույթ, այլև արժեթղթավորման ողջ շրջափոփումը համար, երբ տեղաբաշխված պարտատոմսերը ընդհանուր առմամբ ապահովեցին 36% շահույթաբերություն ակտիվներին արժեթղթավորման ամբողջ գործընթացում:



Գ ծ ապատկ է ր 3.2.3 Ա կ տի վ ն ե ր ի ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն ար դ յ ու ն ք ն եր ի կր կ ն ա կ ի գ ր ա ն ց ու մ ը ` առ ա ջ ար կ վ ո ղ հ ա շ ի վ ն եր ու մ <sup>146</sup>

Յ ե տ ն ա բ ար , առ ա ջ ար կ վ ո ղ մ ե խ ա ն ի գ մ ը հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն կ ս տ ե ղ ծ ի .

Առ ա ջ ի ն , ո չ մ ի ա յ ն ա ն ը ն դ հ ա տ ու թ յ ա ն ս կ գ բ ու ն ք ո վ գ ր ա ն ց ե լ ու հ ա շ վ ա պ ա հ ա կ ա ն հ ա շ ի վ ն ե - ր ու մ ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն տ ն տ ե ս ա կ ա ն ար դ յ ու ն ք ն եր ը , ա յ լ և մ շ տ ա դ ի տ ար կ մ ա ն ե ն թ ար կ ե լ ու պ ար տ ա տ ո մ ս եր ի տ ե ղ ա բ ա շ խ մ ա ն և մ ար մ ա ն ֆ ի ն ա ն ս ա կ ա ն հ ե տ ն ա ն ք ն եր ն ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն ա մ բ ո ղ ջ շ Ր ջ ա փ ու լ լ ի ը ն թ ա ց ք ու մ :

Եր կ ր ո Ր դ , ի ր ա կ ա ն ա ց ն ե լ ու հ ա մ ե մ ա տ ա կ ա ն վ եր լ ու ծ ու թ յ ու ն ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն տ ն տ ե ս ա կ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն գ ծ ո վ ո չ մ ի ա յ ն ա յ դ գ ո Ր ծ ը ն թ ա ց ի յ ու Ր ա ք ա ն չ յ ու Ր փ ու լ լ ու մ , ա յ լ և տ ար բ եր վ ար կ ա յ ի ն փ ու լ լ եր ի ար ժ ե թ ղ թ ա վ ո Ր մ ա ն շ ղ թ ա յ ու մ , գ ն ա հ ա տ ե լ ո վ « եր կ ար փ ո ղ եր ի » ձ ն ա վ ո Ր մ ա ն

<sup>146</sup> Կ ա գ մ վ ա ծ Է հ ա վ ե լ վ ա ծ 3-ի հ ի մ ա ն վ ր ա

ն պատակ ահարմար ու թյունն  
եկամ տաբեր ու թյունը:

ու

### **3.3 Ակտիվներով երաշխավորված պարտատոմսերի շուկայի զարգացման ուղիները ՀՀ-ում**

Արժեթղթերի շուկան, հատկապես իր  
երկրորդային հատվածով, հիմնականում  
դիտարկվում է որպես պարտատոմսերի,  
բաժնետոմսերի, ածանցյալ գործիքների առքու  
վաճառքի մասնագիտացված հարթակ, որն իր մեջ  
ներառում է գնորդների և վաճառողների տնտեսական  
հարաբերություններն ու դրանց կարգավորումը ար-  
ժեթղթերի տեղաբաշխման և շրջանառության  
ընթացքում: Այս տեսակետից, արժեթղթերի շուկան  
որոշ առումներով իրականացնում է դասական  
շուկայի գործառնություններ, նպաստելով  
գնագոյացմանը, տեղեկատվության ապահովմանը, երբ  
լուծվում է առքուվաճառքի պայմանների  
հասանելիությունը գնորդների և վաճառողների  
շրջանակում, ինչպես նաև կատարվում են  
կարգավորիչ գործառնություններ՝ սահմանելով  
վաճառքի պայմանները, առևտրի մասնակիցների միջև  
ծագող վիճահարույց խնդիրների լուծման  
ուղիները, կիրառելով վերահսկողությունը և լծակներ:  
Բացի այդ, արժեթղթերի շուկային բնորոշ են  
առանձնահատուկ գործառնություններ, ինչպիսիք են  
դրամական միջոցների վերաբաշխումները  
տնտեսության ճյուղերի և ոլորտների միջև,  
ինչպես նաև արժեքային և \$իսանսական ռիսկերից  
ապահովագրման միջոցները<sup>147</sup>:


<sup>147</sup> Ценные бумаги, обеспеченные ипотекой и активами / под ред. Л. Хейра; пер. с англ. М.: Альпина Бизнес Букс, 2007. стр. 18-19 416 с.

Չնայած, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում հստակ չի ներկայացվում արժեթղթերի շուկայի բնորոշումը, սակայն դրան գուգահեռ մեկնաբանվում է դրա կարգավորիչ բնույթը, համաձայն որի այն համարվում է հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առք ու վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է<sup>148</sup>:

Հետևաբար, օրենսդրորեն արժեթղթերի շուկան նույնպես դիտարկվում է նեղ իմաստով, այսինքն որպես արժեթղթերի առք ու վաճառքի հարթակ՝ իր գործունեությունը ապահովող անհրաժեշտ միջոցներով: Սակայն մեր կարծիքով, արժեթղթավորված ակտիվների շուկան անհրաժեշտ է մեկնաբանել ավելի լայն իմաստով, նրանում ոչ միայն ընդգրկելով վարկային, ներդրումային և բիզնես կազմակերպությունների գործունեության ոլորտները, այլև ակտիվների արժեթղթավորմանը նպաստող ինստիտուցիոնալ կառույցների գործունեության ծավալները (տես գծապատկեր 3.3.1):

---

<sup>148</sup> «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդված 3, կետ 31



Գ ծ ա պ ա տ կ ե ր 3.3.1 Ա ր ժ ե թ ղ թ ա վ ո ր վ ա ծ ա կ տ ի վ ն ե ր ի շ ու կ ա յ ի ձ ն ա վ ո ր մ ա ն մ ե խ ա ն ի գ մ ը <sup>149</sup>

